

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

**ՀՀ դրամավարկային  
քաղաքականության ծրագիր**

1' 2009

**Գնաձի հաշվետվություն**



**ԵՐԵՎԱՆ  
2009**



Հայաստանի  
Հանրապետության  
դրամավարկային  
քաղաքականության  
ծրագիր  
(ճշգրտված)

2009 թ. 1-ին եռամսյակ

## Բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ու ն

<b>2009 թվականի կանխատեսումները (ճշգրտված) .....</b>	<b>5</b>
<i>Արտաքին միջավայր .....</i>	<b>5</b>
<i>Համախառն առաջարկ .....</i>	<b>5</b>
<i>Համախառն պահանջարկ .....</i>	<b>7</b>
<i>Աշխատանքի շուկա .....</i>	<b>9</b>
<i>Փող և վարկ .....</i>	<b>9</b>
<b>Գնաճի կանխատեսումներ .....</b>	<b>9</b>
<b>Դրամավարկային քաղաքականության ուղղությունները կանխատեսվող 12-ամսյա ժամանակահատվածում .....</b>	<b>11</b>

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում 2009 թվականի մարտին ԱՄՆ-ը և Համաշխարհային բանկը վերանայեցին 2009 թ. համաշխարհային տնտեսական աճը՝ 0.5 տոկոս աճի փոխարեն կանխատեսելով նվազում՝ առաջին անգամ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակահատվածում: Հայաստանի տնտեսության վրա կշարունակեն բացասաբար անդրադառնալ արտաքին պահանջարկի նշանակալի կրճատումը, անբարենպաստ առևտրի պայմանները և ֆինանսական ներհուսքի թուլացումը: Համաշխարհային պահանջարկի կրճատումը կնպաստի նաև ցածր միջազգային գների պահպանմանը ողջ 2009 թվականի ընթացքում: Բավականին բարձր է արտաքին զարգացումների կանխատեսումների անորոշության աստիճանը՝ պայմանավորված համաշխարհային ճգնաժամի խորությամբ և տնտեսության վերականգնման ժամկետների անորոշությամբ:

Ինչ վերաբերում է ապրանքային շուկաներին, ապա, չնայած 2009 թվականի առաջին եռամսյակի վերջին արձանագրված գների որոշակի աճի միտումներին, ինչպես և նախկին գնահատումների ժամանակ, ակնկալվում է, որ և՛ էներգակիրների, և՛ արդյունաբերական մետաղների միջազգային գները կմնան հարաբերականորեն ցածր մակարդակների վրա, մինչև համաշխարհային տնտեսական աճի վերականգնման նշանների երևան գալը, որը սպասվում է միայն 2009 թ. վերջում:

Պարենային ապրանքների, մասնավորապես՝ հացահատիկի շուկայում, գները նույնպես կպահպանվեն դեռևս ցածր մակարդակի վրա, սակայն ապագա զարգացումները հիմնականում կախված կլինեն 2009/2010 մարքեթինգային տարում հացահատիկի բերքի սպասումներից:

*Ընդհանուր առմամբ, չնայած հետագա զարգացումների անորոշության բարձր աստիճանին, ակնկալվում է, որ համաշխարհային պահանջարկի կրճատման պայմաններում միջազգային գների ցածր մակարդակները կպահպանվեն նաև 2009 թվականին:*

## Համախառն առաջարկ

Տնտեսության ճյուղային կանխատեսումները ճշգրտվել են նվազման ուղղությամբ՝ պայմանավորված 2008 թվականի վերջին եռամսյակից վառ արտահայտված համաշխարհային պահանջարկի կրճատման և կապիտալ ներհոսքի աճի տեմպի դանդաղման միտումների պահպանմամբ: Արդյունքում՝ 2009 թվականին ՀՆԱ-ն իրական արտահայտությամբ կնվազի շուրջ 3%-ով<sup>2</sup>:

Տնտեսական աճի ռիսկերը երկկողմանի են և կապված են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոնների հետ: Տնտեսական աճի՝ նվազման ուղղությամբ ռիսկերի պատճառը համաշխարհային պահանջարկի անկման տևականության պայմաններում ներքին պահանջարկի՝ ակնկալվածից ավելի նվազումն է: Միաժամանակ, աճի ուղղությամբ ռիսկերը կապված են ՀՀ կառավարության կողմից որոշ խոշոր ծրագրերի, մասնավորապես՝ փոքր և միջին ձեռնարկությունների խթանման, արտահանելի հատվածին ֆինանսական աջակցության, աղետի գոտում բնակարանային շինարարության, ճանապարհաշինության, ենթակառուցվածքներում ներդրումների իրականացման արագության հետ:

**Շինարարության** ճյուղում 2009 թվականին շարունակվելու է նախորդ տարվա վերջին եռամսյակում արձանագրված նվազման միտումը՝ պայմանավորված արդյունաբերության և ծառայությունների ճյուղերում ներդրումային նա-

<sup>1</sup> Արտաքին միջավայրի կանխատեսումների համար հիմք է ծառայել ԱՄՆ-ի, Համաշխարհային բանկի, The Economist, Global Insight, Financial Times, US Department of Agriculture, РосБизнесКонсалтинг և այլ աղբյուրների տեղեկատվությունը:

<sup>2</sup> 2009 թ. տարեկան ՀՆԱ կանխատեսման կենտրոնական արժեքը կազմում է 2.9% նվազում:


խագծերի շարունակական հետաձգմամբ, ինչպես նաև բնակարանային շինարարության աճի տեմպերի ակնկալվող նվազմամբ: Մինևույն ժամանակ, ակնկալվում է կապի և տրանսպորտի, գյուղատնտեսության, էներգետիկայի և կոմունալ ծառայությունների ոլորտում իրականացվող շինարարության ծավալների աճ: Արդյունքում՝ 2009 թվականին կանխատեսվում է շինարարության ավելացված արժեքի 11-15% իրական նվազում:

**Ծառայությունների** ոլորտում ակնկալվող աճի ցուցանիշները նույնպես վերանայվել են նվազման ուղղությամբ՝ պայմանավորված մասնավոր և պետական սպառման կանխատեսվող ցուցանիշների ճշգրտմամբ, որն անդրադառնալու է ինչպես առևտրաշրջանառության ծավալների, այնպես էլ մատուցված այլ ծառայությունների ծավալների վրա: 2008 թվականի վերջին երկու ամիսներին մանրածախ առևտրաշրջանառության ոլորտում արձանագրված աճի տեմպի նվազման միտումները կորստորվեն նաև 2009 թվականին: Արդյունքում՝ 2009 թվականին ծառայությունների ավելացված արժեքի իրական աճը կանխատեսվում է 0 - 4%-ի սահմաններում:

**Արդյունաբերության** ճյուղի 2009 թվականի կանխատեսումները վերանայվել են փոքր-ինչ նվազման ուղղությամբ, ինչի արդյունքում ակնկալվում է ավելացված արժեքի 1-5% նվազում: Կանխատեսված ցուցանիշների նվազեցումը պայմանավորվել է համաշխարհային պահանջարկի անկման արդյունքում հանքարդյունաբերությունում, 2008 թվականի չորրորդ եռամսյակից սկսած, աճի տեմպի շարունակական նվազմամբ, ինչպես նաև քիմիական արդյունաբերությունում և մետաղագործությունում թողարկման ծավալների ակնկալվող նվազմամբ և դրա հետևանքով՝ էներգետիկայի աճի տեմպերի ճշգրտմամբ: Այնուամենայնիվ, արդյունաբերության ճյուղում աճ կապահովեն էներգետիկայի և սննդի արդյունաբերության ենթաճյուղերը:

**Գյուղատնտեսության** ճյուղի կանխատեսումները չեն վերանայվել. ակնկալվում է 3-5% իրական աճ՝ պայմանավորված բնականոն աճի բազայի՝ այգիների և ցանքատարածությունների, ինչպես նաև անասնազվաքանակի ավելացմամբ:

**ՉՆԱ իրական աճի կանխատեսման հավանականությունների բաշխում (եռամսյակը՝ նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ)**



**2009 թվականի տնտեսական աճի կանխատեսման հավանականությունների բաշխում**

Տնտեսական աճի միջակայքը	Տնտեսական աճի՝ տվյալ միջակայքում լինելու հավանականությունը			
	2009թ. I եռ.	2009թ. II եռ.	2009թ. III եռ.	2009թ. IV եռ.
< -7%	0.00%	0.02%	1.32%	0.92%
-7 - -5%	0.40%	7.61%	16.84%	4.51%
-5 - -3%	74.90%	65.87%	47.73%	14.69%
-3 - -1%	26.24%	27.49%	30.50%	26.52%
-1 - 1%	0.05%	0.64%	5.23%	27.29%
1 - 3%	0.00%	0.00%	0.24%	17.78%
3 - 5%	0.00%	0.00%	0.00%	7.53%
> 5%	0.00%	0.00%	0.00%	2.47%

**Համախառն պահանջարկ**

2009 թվականին համաշխարհային ֆինանսական և տնտեսական ճգնաժամի ազդեցությունը ՀՀ տնտեսությունում կարտահայտվի համախառն պահանջարկի նվազմամբ, որը հիմնականում կայանաձևավորվի ներքին պահանջարկի անկմամբ: Զգալիորեն կնվազեն մասնավոր հատվածի ծախսումները, մինչդեռ պետական հատվածի ծախսումները որոշակիորեն կաճեն՝ համաշխարհային ճգնաժամի հետևանքները մեղմելու և մասնավոր հատվածում տնտեսական ակտիվությունը հետզհետե վերականգնելու համար:

*Մասնավոր հատվածի ծախսումների՝* 2009 թվականի իրական աճի գնահատումները ճշգրտվել են նվազման ուղղությամբ ինչպես մասնավոր սպառման, այնպես էլ մասնավոր ներդրումների մասով: Աճի տեմպերի գնահատումների վերանայման համար հիմք են հանդիսացել համաշխարհային տնտեսական իրավիճակի վատթարացման հետևանքով մի շարք ցուցանիշների, այդ թվում՝ բնակչության եկամուտների՝ աշխատավարձերի և ընթացիկ տրանսֆերտների, ինչպես նաև կապիտալ տրանսֆերտների, արտաքին ֆինանսական այլ հոսքերի զգալի նվազման սպասումները, համաշխարհային պահանջարկի անկման միտումների պարագայում ներդրումային միջավայրում անորոշությունների և բացասական սպասումների առկայությունը:

Ըստ գնահատումների՝ 2009 թվականին ակնկալվում է մասնավոր սպառման իրական նվազման 5 - 6% ցուցանիշ, իսկ մասնավոր ներդրումներն իրական արտահայտությամբ կնվազեն շուրջ 5.6 - 6.5%-ով:

Մասնավոր ծախսումների հավասարակշիռ մակարդակից շեղման գնահատումների համաձայն՝ 2009 թվականի ընթացքում կձևավորվի մասնավոր ծախսումների մեծ բացասական ճեղքվածք՝ շուրջ 5 - 7% միջակայքում՝ պայմանավորված ինչպես սպառման, այնպես էլ ներդրումների կանխատեսվող բացասական ճեղքվածքներով: Այդպիսով, տարվա ընթացքում մասնավոր ծախսումները գնանկումային ճնշումներ կառաջացնեն սպառողական շուկայում՝ նվազեցնելով գնաճը 1.5 - 2.1 տոկոսային կետով:

*Հարկաբյուջետային հատվածի* 2009 թվականի ծրագրերի կատարման հիմնական ուղեցիղը ՀՆԱ-ում հարկային եկամուտների 17.4% ցուցանիշի (2008 թվականի համեմատությամբ 0.4 տոկոսային կետով աճ) ապահովումն է և պետական ծախսերի իրականացումը ծրագրված մակարդակին համապատասխան: Տարվա առաջին կեսին, տնտեսության ակտիվության անկմամբ պայմանավորված, հնարավոր է բյուջեի եկամուտների՝ նախատեսվածի համեմատ որոշակի ցածր ցուցանիշի ձևավորում, որի պարագայում, Կառավարության հայտարարության համաձայն, ծախսային որոշակի ծրագրեր կտեղափոխվեն տարվա երկրորդ կիսամյակ:

ՀՀ տնտեսության վրա համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը մեղմելու նպատակով ՀՀ կառավարության ձեռնարկած հակաճգնաժամային ծրագրերի շրջանակներում ակնկալվում է պետական հատվածի դերի մեծացում և դրանով իսկ՝ ներքին պահանջարկի խթանում: Սասնավորապես, կառավարության ծրագրերն ուղղվելու են փոքր ու միջին ձեռնարկությունների խթանմանը, արտահանելի հատվածին աջակցելուն, ինչպես նաև ոչ արտահանելի հատվածում պետական ծախսերի մեծացմանը:

Այսպիսով, վերոնշյալի արդյունքում համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականությունը կունենա շուրջ 2% ընդլայնող ազդեցություն: Սակայն, կախված Կառավարության կողմից հայտարարված ծրագրերի փաստացի իրականացված ծավալներից, ներքին պահանջարկի խթանումը կարող է լինել ինչպես ավելի մեծ, այնպես էլ փոքր՝ համապատասխանաբար արտահայտվելով նաև մասնավոր հատվածի ծախսումների այս և հաջորդ տարվա զարգացումներում:

Ամփոփելով իրական և հարկաբյուջետային հատվածներում ակնկալվող զարգացումները՝ նշենք, որ 2009 թվականի ընթացքում ներքին պահանջարկի մակարդակը կլինի հավասարակշռից զգալիորեն ցածր՝ գնանկումային ճնշումներ առաջացնելով տնտեսությունում:

Արտաքին միջավայրի անբարենպաստ զարգացումների հաղթահարման տևականության անորոշության պայմաններում **վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի** հիմնական հոդվածների կանխատեսումները իրականացվել են՝ հաշվի առնելով ներքին տնտեսության ներկա զարգացումները և Կառավարության կողմից իրականացվող համապատասխան միջոցառումները: Արտաքին պահանջարկի նվազումը, ինչը կարտահայտվի նաև արդյունաբերական մետաղների միջազգային գների ցածր մակարդակի պահպանմամբ, նշանակալի դերակատարում կունենա 2009 թ. արտահանման տարեկան ծավալների նվազման հարցում: Մյուս կողմից, ՀՀ դրամի անվանական փոխարժեքի արժեզրկման հետևանքով տեղի ունեցած իրական փոխարժեքի ճշգրտումը և վերադարձը հավասարակշռ մակարդակին էականորեն կնպաստեն արտաքին հաշվեկշռվածության ձևավորմանը և կխթանեն ինչպես արտահանումը, այնպես էլ ներմուծման փոխարինիչների արտադրությունը՝ ձևավորելով արտահանելի հատվածում ներդրումների, աշխատատեղերի ստեղծման և ապագա տնտեսական աճի հիմքեր: Ի լրումն իրական փոխարժեքի ճշգրտման, արտահանման ծավալների վրա դրական ազդեցություն կունենան նաև Կառավարության՝ արտահանման ուղղվածություն ունեցող որոշ ձեռնարկությունների աջակցության ծրագրերը: Արդյունքում՝ 2009 թ. ակնկալվում է ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալների 25 - 30% նվազում, որը գրեթե ամբողջությամբ պայմանավորված է արտահանման գների նվազմամբ: Իսկ ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալների նվազումը գնահատվում է 1-3%:

2009 թ. ապրանքների և ծառայությունների ներմուծման դոլարային ծավալների նվազումը ակնկալվում է 30 - 35%: Այն նույնպես կպայմանավորվի իրական փոխարժեքի ճշգրտմամբ, ինչպես նաև ներքին տնտեսության եկամուտների նվազմամբ: Արդյունքում՝ սպասվում է ապրանքների և ծառայությունների ներմուծման իրական արտահայտությամբ կրճատում՝ 25 - 30%:

Ինչ վերաբերում է ֆիզիկական անձանց կողմից բանկային համակարգով իրականացվող ոչ առևտրային բնույթի զուտ փոխանցումներին, ապա 2009 թ. հունվար-փետրվարին թեև այս ցուցանիշը 31.4%-ով նվազել է, այնուամենայնիվ, նշված ժամանակահատվածում գրանցվել է ֆիզիկական անձանց ընդհանուր փոխանցումների (ներառյալ նաև առևտրային փոխանցումները) զուտ ներհոսքի 63.8% աճ (զուտ ներհոսքը կազմել է 83.1 մլն ԱՄՆ դոլար): Ընդ որում՝ հունվար-փետրվարին ֆիզիկական անձանց ընդհանուր փոխանցումների ներհոսքը նվազել է 19.5%-ով՝ արտահոսքի 46,0% նվազման պայմաններում<sup>3</sup>:

<sup>3</sup> *Դրամավարկային քաղաքականության տեսանկյունից կարևորվում է ֆիզիկական անձանց առևտրային և ոչ առևտրային փոխանցումների վարքագիծը, քանի որ ֆիզիկական անձանց կողմից բանկային համակարգով իրականացվող ընդհանուր փոխանցումների տարանջատումը առևտրային և ոչ առևտրային բնույթի փոխանցումների պայմանական է և կատարվում է դրամական միջոցների փոխանցման նպատակի հայտարարագրման հիման վրա:*

Այնուամենայնիվ, 2009 թ. ակնկալվում է ֆիզիկական անձանց առևտրային և ոչ առևտրային զուտ փոխանցումների շատ ավելի պակաս նվազում (10-15%-ի չափով), քան գնահատվում է ոչ առևտրային բնույթի զուտ փոխանցումների մասով (նվազումը կկազմի 30 - 35%)՝ հիմնականում պայմանավորված փոխանցումների արտահոսքի զգալի նվազմամբ: Ռուսաստանի տնտեսության ներկա անբարենպաստ զարգացումները, որոնք գոնե մինչև տարեվերջ դրական հեռանկարներ չեն խոստանում, կպայմանավորեն զուտ փոխանցումների նվազումը:

Արդյունքում՝ ընթացիկ հաշվի պակասուրդ/ՅՆԱ ցուցանիշը, ի տարբերություն նախկին վատատեսական սցենարի, կձևավորվի հարաբերականորեն ցածր մակարդակում՝ 8 - 10% միջակայքում:

## Աշխատանքի շուկա

Աշխատանքի շուկայի ցուցանիշների՝ 2009 թվականի գնահատումները վերանայվել են նվազման ուղղությամբ: Վերանայման հիմնական պատճառը համաշխարհային ֆինանսական և տնտեսական ճգնաժամի հետևանքով տնտեսությունում համախառն պահանջարկի, այդ թվում՝ աշխատուժի նկատմամբ պահանջարկի զգալի նվազման սպասումներն են, ինչպես նաև միգրանտների արտահոսքի կրճատմամբ պայմանավորված՝ աշխատուժի առաջարկի աճը:

Ըստ վերանայված գնահատումների՝ տնտեսության միջին անվանական աշխատավարձը 2009 թվականին կնվազի շուրջ 2%-ով: Ընդ որում՝ մասնավոր հատվածում անվանական աշխատավարձը կնվազի ավելի քան 7%-ով՝ պայմանավորված ինչպես արտադրողականության նվազմամբ, այնպես էլ տնտեսությունում աշխատուժի առաջարկի էական աճով: Բյուջետային ֆինանսավորում ունեցող կազմակերպություններում, սակայն, կնկատվի աշխատավարձի որոշակի աճ:

Ըստ գնահատումների՝ 2009 թվականին աշխատանքի շուկայում որոշակի գնանկումային ճնշումներ կդրսևորվեն, քանի որ մասնավոր հատվածում կարծանագրվի միավոր աշխատուժի ծախսերի զգալի նվազում:

## Փող և վարկ

Կանխատեսվող մակրոտնտեսական զարգացումների պայմաններում 2009 թվականի դրամավարկային ցուցանիշների աճի տեմպերը հիմնականում վերանայվել են նվազման ուղղությամբ: Ակնկալվում է, որ 2009 թ. դեկտեմբերի վերջի դրությամբ փողի զանգվածը կավելանա տարեկան 9 - 12%-ով, իսկ փողի բազան՝ 2 - 5%-ով:

Ի տարբերություն նախորդ տարիներին դրսևորված նվազմանը, 2009 թ-ին սպասվում է փողի բազմարկչի տարեկան 7 -10% աճ՝ պայմանավորված ֆինանսական միջնորդության աճով: Այս զարգացումները հիմնականում կպայմանավորվեն բանկային համակարգի միջոցով փոքր և միջին ձեռնարկությունների վարկավորման՝ Կառավարության նախատեսած ծրագրերով և 2009 թվականին ակնկալվող խոշոր պակասուրդային բյուջեով: Այս պայմաններում տնտեսության փողայնացումը ևս կաճի (տարեկան 9 - 11%)՝ 2008 թ-ին արձանագրված 11.8% նվազման փոխարեն:

## ԳՆԱԾԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ

«Ապրանքատեսակների գնաճի մոդելի» արդյունքների համաձայն՝ տոկոսադրույքների անփոփոխ մակարդակի վարկածի պայմաններում, 2009 թվականի երկրորդ եռամսյակի վերջին գնաճի կանխատեսման կենտրոնական արժեքը կկազմի 5.2%, իսկ տարեվերջին՝ 5.9%:


Բազային սցենարում ներառված հիմնական ենթադրությունները հետևյալն են.

- 2009 թ. երկրորդ եռամսյակից սկսած՝ կանխատեսվում են ներառված է սպառողների համար 2009 թ. ապրիլի 1-ից զազի, էլեկտրաէներգիայի և ջրի սակագների ուղղակի և ինքնարժեքի միջոցով այլ ապրանքների գների աճի անուղղակի ազդեցությունը,

- 2009 թ. մարտից սկսած՝ հաշվի է առնվել նաև ՀՀ դրամի արժեզրկմամբ պայմանավորված ներմուծված ապրանքների ներքին գների աճը,
- Կառավարության կողմից նախատեսված ծրագրերի իրագործման արդյունքում հարկաբյուջետային քաղաքականության ընդլայնողական ազդեցությունը ներքին պահանջարկի և գնաճի վրա:

**Ռիսկեր:** 2009 թ. տնտեսական հավանական զարգացումների դեպքում հնարավոր են գնաճի կանխատեսված ցուցանիշից ինչպես նվազման, այնպես էլ աճի ուղղությամբ շեղման ռիսկեր: Մասնավորապես՝ համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով տնտեսությունում համախառն պահանջարկի՝ ակնկալվածից ավելի շատ նվազումը հիմնական գնանկումային ռիսկն է: Միաժամանակ, համաշխարհային տնտեսության վերականգնմանը զուգահեռ, 2009 թ. երկրորդ կիսամյակից միջազգային գների աճի միտման ձևավորման և Կառավարության կողմից հայտարարված ծրագրերի իրագործման տեմպից կախված՝ կարող են դրսևորվել նաև գնաճային ռիսկեր:

**Գնաճի կանխատեսման հավանականությունների բաշխման գրաֆիկ**



**2009 թվականի գնաճի կանխատեսման հավանականությունների բաշխում**

Գնաճի միջակայքը	Գնաճի՝ տվյալ միջակայքում լինելու հավանականությունը	
	2009 թ. II եռ.	2009 թ. IV եռ.
2.0 - 3.0%	0.04%	1.2%
3.0 - 4.0%	2.8 %	4.1%
4.0 - 4.5%	14.3%	7.5%
4.5 - 5.0%	16.9%	10.9%
5.0 - 5.5%	47.5%	14.2%
5.5 - 6.5%	18.4%	31.4%
6.5 - 7.5%	0.02%	22.7%
7.5 - 8.5%	0.0%	6.9%
> 8.5%	0.0%	0.9%

Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների, 2009 թվականի մարտից արտարժույթի շուկայում ԿԲ միջամտությունները սահմանափակելու հետևանքով տեղական արժույթի արժեզրկման և նախորդ դրամավարկային ծրագրում նշված գնաճային ռիսկերի հետագա դրսևորման, մասնավորապես՝ ապրիլի 1-ից վերջնական սպառողների համար գազի սակագների թանկացման արդյունքում 2009 թվականի ընթացքում գնաճը կավելանա, սակայն երկրորդ եռամսյակի ավարտին չի գերազանցի նպատակային միջակայքի վերին սահմանը: Այնուամենայնիվ, արտաքին հետագա զարգացումները և Կառավարության կողմից հայտարարված ծրագրերի իրագործման ծավալները կպայմանավորեն գնաճի հետագա վարքագիծը: Այս պայմաններում հնարավոր է, որ տարեվերջին գնաճը որոշակիորեն գերազանցի նպատակային միջակայքի վերին սահմանը: Միաժամանակ, կանխատեսվող ժամանակահատվածում գնաճը զսպող գործոններ կհանդիսանան համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով արտաքին գնանկումային միջավայրի պահպանումը և հավասարակշռից էապես ցածր ներքին պահանջարկի ձևավորումը: Չնայած ԿԲ-ն վերոնշյալ հեռանկարների պայմաններում արդեն իսկ մարտի սկզբից բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 1.0 տոկոսային կետով, սակայն դրամի արժեզրկումը հանգեցրել է դրամավարկային պայմանների էական թուլացման:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ տարվա ընթացքում գնաճի տեմպերի ավելացման և տնտեսական սպասվող զարգացումների ներկա գնահատումների պայմաններում, տոկոսադրույքների հետագա ճշգրտումը կախված է լինելու գնաճի նպատակային թիրախից շեղումները կանխելու և տնտեսական աճին աջակցելու խնդիրների խելամիտ համադրումից: Կարևորվում է նաև այն հանգամանքը, որ դրամային ակտիվների տոկոսադրույքների բարձր մակարդակը նպաստում է դրամային ակտիվների նկատմամբ պահանջարկի աճին և երկրից կապիտալի արտահոսքի զսպմանը՝ բարձրացնելով ֆինանսական հատվածի նկատմամբ վստահությունը:



**ԳՆԱՃԻ  
ԽԱՉՎԵՏՎՈՒՅՈՒՆ**

**2009 թ. 1-ին եռամսյակ**

## Բովանդակություն

<b>1. Համառոտագիր</b> .....	<b>15</b>
<b>2. Գնաճի զարգացումներ</b> .....	<b>17</b>
2.1. Գնաճն ըստ ապրանքների և ծառայությունների խմբերի, բնականոն գնաճ .....	17
<i>Գնաճի տատանումների վիճակագրական վերլուծություն</i> .....	18
2.2. Գնաճի նպատակի իրագործում .....	19
<b>3. Գնաճի գործոններ</b> .....	<b>22</b>
3.1. Արտաքին միջավայր .....	22
3.2. Վճարային հաշվեկշիռ .....	27
3.3. Տոկոսադրույքներ, փոխարժեք և դրամավարկային զարգացումներ .....	31
3.3.1. <i>Տոկոսադրույքներ</i> .....	31
3.3.2. <i>Փոխարժեք</i> .....	34
3.3.3. <i>Դրամավարկային զարգացումներ</i> .....	36
3.4. Համախառն պահանջարկ և առաջարկ .....	40
3.4.1. <i>Համախառն պահանջարկ</i> .....	40
3.4.2. <i>Համախառն առաջարկ</i> .....	42
3.5. Աշխատանքի շուկա .....	44
3.6. Ներմուծման գներ և արտադրողների գներ .....	44
3.6.1. <i>Ներմուծման գներ</i> .....	44
3.6.2. <i>Արտադրողների գներ</i> .....	45
3.7. Գնաճի սպասումներ .....	46

# 1. ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

2009 թվականի առաջին եռամսյակում դրսևորվել են գների զարգացումը պայմանավորող արտաքին և ներքին տնտեսական գործոնների տարաբնույթ ազդեցություններ: Համաշխարհային ֆինանսական և տնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունը համաշխարհային տնտեսական աճի վրա առավել էական էր, քան կանխատեսում էին բազմաթիվ հեղինակավոր միջազգային կառույցներ: Համաշխարհային պահանջարկի շարունակական նվազման պայմաններում արտաքին հատվածի ցածր գնաճային միջավայրը պահպանվել է ողջ եռամսյակի ընթացքում՝ փոխանցվելով նաև ՀՀ ապրանքային շուկաներ: Մյուս կողմից, նույն գործոնով պայմանավորված, նվազել են նաև ներքին պահանջարկի սպառման և ներդրումների բաղադրիչները՝ լրացուցիչ զսպող ազդեցություն ունենալով գնաճի ընդհանուր մակարդակի վրա: Այնուհանդերձ, մարտի սկզբին տեղի ունեցած դրամի արժեզրկման պայմաններում, ներմուծված ապրանքների հիմնական մասի դրամային գները մասամբ ճշգրտվել են՝ փոքր-ինչ թուլացնելով գնանկումային միջավայրի ազդեցությունը: Նշված զարգացումների արդյունքում գնաճի 12-ամսյա ցուցանիշը մարտին նվազել է՝ կազմելով 1.0% (նախորդ տարեվերջին արձանագրվել էր 5.2%):

Տնտեսության իրական հատվածի վրա համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունը հիմնականում արտահայտվել է համաշխարհային պահանջարկի կրճատման և կապիտալ ներհոսքի աճի տեմպերի կտրուկ անկման միջոցով: Այդ ազդեցությունը առաջին հերթին դրսևորվել է արդյունաբերության և շինարարության ճյուղերում, որտեղ 2009 թվականի առաջին եռամսյակում շարունակվել է տնտեսական անկումը՝ հանգեցնելով ՀՆԱ-ի 6.1%-ով նվազման:

Ցուցանիշները վատթարացել են նաև աշխատանքի շուկայում: Մասնավոր հատվածում արձանագրվել է գործազրկության մակարդակի աճ, իրական աշխատավարձի որոշակի նվազում: Այս պայմաններում աշխատանքի շուկայում մասնավոր հատվածի կողմից որոշակի գնանկումային ճնշումներ են առաջացել, որոնք չեզոքացել են պետական հատվածում արձանագրված աշխատավարձերի զգալի աճի հաշվին:

2009 թվականի առաջին եռամսյակում համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքներն ավելի վառ են արտացոլվել ներքին պահանջարկի՝ հատկապես մասնավոր ծախսումների զարգացումներում, որի հիմնական պատճառը մասնավոր հատվածի եկամուտների կրճատումն էր՝ պայմանավորված ինչպես արտաքին ֆինանսական ներհոսքի, այնպես էլ մասնավոր հատվածի աշխատավարձերի կրճատմամբ: Եռամսյակի ընթացքում ներքին պահանջարկի շուրջ 4.7% նվազումը բացառապես պայմանավորվել է մասնավոր ծախսումների զգալի՝ 7.4% նվազմամբ, մինչդեռ պետական հատվածում արձանագրվել է ծախսումների շուրջ 9.6% իրական աճ: Նշված զարգացումների արդյունքում մասնավոր հատվածի իրական ծախսումները գնանկումային ճնշումներ են առաջացրել սպառողական շուկայում՝ նվազեցնելով գնաճը շուրջ 2.1 տոկոսային կետով, քանի որ ցածր են եղել հավասարակշիռ մակարդակից շուրջ 7%-ով:

2009 թվականի առաջին եռամսյակում հարկաբյուջետային հատվածը համախառն պահանջարկի վրա ունեցել է փոքր-ինչ՝ 0.5% ընդլայնող ազդեցություն: Այն ձևավորվել է եկամուտների 2.6% ընդլայնող և ծախսերի 2.1% զսպող ազդեցությունների արդյունքում: Տնտեսական ակտիվության անկմամբ պայմանավորված, պետական բյուջեի եկամուտները առաջին եռամսյակի համամասնություններից թերի են հավաքագրվել մոտ 42.8 մլրդ դրամով, որով էլ պայմանավորվել է ամբողջական պահանջարկի վրա եկամուտների ընդլայնող ազդեցությունը: Եռամսյակի ընթացքում ձևավորված ՀՆԱ անվանական մակարդակը ևս զիջել է կանխատեսված ՀՆԱ ցուցանիշը: Պետական ծախսերը ևս թերի են կատարվել՝ պայմանավորված եկամուտների նշված թերհավաքագրումներով: Չնայած նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ծախսերը աճել են 12%-ով, սակայն համախառն պահանջարկի վրա, ըստ ազդակների հաշվարկված ցուցանիշի, ունեցել են զսպող ազդեցություն՝ պայմանավորված այն հանգամանքով, որ առաջին եռամսյակում արձանագրված ՀՆԱ մակարդակը զգալիորեն ցածր էր պտտենցիալ ՀՆԱ-ի գնահատված մակարդակից:

2009 թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները շարունակել են արտահայտվել ներքին պահանջարկի թուլացմամբ, ինչը

դրսևորվել է ներմուծման նվազման միջոցով: Ներմուծման տ/տ նվազումը կազմել է 21.3%՝ արտահանման 47.8% նվազման պայմաններում: Վերջին տարիների բարձր աճից հետո առաջին անգամ արձանագրվել է մասնավոր տրանսֆերտների և սեզոնային աշխատողների եկամուտների ներհոսքի նշանակալի նվազում: Արդյունքում՝ թեպետ առևտրային հաշվեկշռի պակասուրդը նվազել է, այնուամենայնիվ այլ հոսքերի նվազման հետևանքով ընթացիկ հաշվի պակասուրդն առաջին եռամսյակում ավելացել է տ/տ 57.7 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 361.6 մլն ԱՄՆ դոլար, իսկ կշիռը ՅՆԱ-ում կազմել է 25.5% (նախորդ տարվա նույն եռամսյակում 19.2%):

2009 թ. առաջին եռամսյակում դրամավարկային հատվածի զարգացումների վրա էական ազդեցություն է ունեցել համաշխարհային ճգնաժամի խորացումը: Արդյունքում, դրամավարկային միջավայրը<sup>1</sup>, ինչպես և սպասվում էր, բնութագրվել է տնտեսության դուլարայնացման գործընթացի արագացմամբ, ինչն արտահայտվել է փողի ագրեգատների դրամային բաղադրատարրերի նվազմամբ: Դրամային զանգվածը նվազել է տ/տ 33.7%-ով. դրամային ավանդների նվազումը կազմել է 38.7%, իսկ շրջանառությունում գտնվող կանխիկ դրամինը՝ 29.8% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ համապատասխանաբար 55.8%, 63.9% և 50% աճ):

Վերոնշյալ երևույթն արտացոլվել է նաև դրամային արտահայտությանը արտարժույթային ավանդների տարեկան վարքագծում. գրեթե 2 անգամ կամ 139.8 մլրդ դրամով աճ այն դեպքում, երբ նախորդ տարվա առաջին եռամսյակում նույն ցուցանիշը աճել էր ընդամենը 3.5%-ով (պայմանավորված դոլարի տ/տ արժևորմամբ):

Վարկավորման պայմանների խստացման հետևանքով վարկավորման աճի տեմպերը որոշակի դանդաղել են՝ տ/տ 36.3% կամ 191.2 մլրդ դրամ (2008-ին՝ 79.7% կամ 233.4 մլրդ դրամ): Վերջինիս վրա ազդեցություն է ունեցել նաև մարտի սկզբին դրամի փոխարժեքի կտրուկ արժեզրկումը, որը բացառելու դեպքում ունենում ենք վարկավորման ավելի փոքր աճ՝ տ/տ 25.3% կամ 131.6 մլրդ դրամ:

Վերոնշյալ զարգացումներն ուղղորդել են գնաճի նպատակի իրագործման ընթացքը և դրամավարկային քաղաքականության ուղղությունները եռամսյակի ընթացքում: Հունվար-փետրվարին, երբ ակնհայտ էր համաշխարհային պահանջարկի շարունակական կրճատման պայմաններում ձևավորված արտաքին գնանկումային միջավայրի ազդեցությունը ներքին ապրանքային շուկաների վրա, իսկ մյուս կողմից առկա էին գազի սակագնի բարձրացման ուղղակի և անուղղակի գործոններով պայմանավորված լրացուցիչ գնաճային ռիսկեր, ԿԲ-ն շարունակել է վերաֆինանսավորման տոկոսադրույքի աստիճանական (0.25-ական տոկոսային կետով) նվազեցման՝ նախորդ տարեվերջին իրականացրած քաղաքականությունը: Այս ժամանակահատվածում քաղաքականության հիմնական շեշտադրումը գների կայունության և ֆինանսական կայունության ապահովման խնդիրների զուգորդումն էր: Համաշխարհային ճգնաժամի պայմաններում ֆինանսական կայունությունը պահպանելու նկատառումներով ԿԲ-ն հունվար-փետրվարին ակտիվացրել է նաև միջամտությունը արտարժույթի շուկայում՝ փորձելով կայունացնել փոխարժեքը: Այս ժամանակահատվածում ԿԲ-ն բավարար իրացվելիություն է ներարկել բանկային համակարգ՝ հնարավորություն տալով բանկերին ամրացնելու իրենց ֆինանսական դիրքերը: Մարտի սկզբից, երբ ԿԲ միջամտությունը արտարժույթի շուկայում դադարեցվել է, դրամի փոխարժեքը ճշգրտվել է՝ հասնելով իր հավասարակշիռ մակարդակին: Դրամի արժեզրկման, նախորդ կանխատեսումներում նախանշված գնաճային ռիսկերի դրսևորման, ինչպես նաև տնտեսական անկման խորացման գնահատումների պայմաններում դրամավարկային քաղաքականության շեշտադրումները առավելապես տեղափոխվել են գների կայունության և տնտեսական ակտիվությունը խթանելու խնդիրների համակցման վրա:

<sup>1</sup> 2008թ. երրորդ եռամսյակից սկսած՝ «Գնաճի հաշվետվություն» պարբերականում տրվում են ավանդային կազմակերպությունների՝ ԿԲ-ի, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշռային ցուցանիշները:

## 2. ԳՆԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

### 2.1. ԳՆԱԾՆ ԸՍՏ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԵՐԻ, ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱԾ


2009 թ. մարտին, 2008թ. մարտի համեմատությամբ, գրանցվել է 1.0% գնաճ, ընդ որում՝ պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) ապրանքների գները նվազել են 2.7%-ով, իսկ ոչ պարենային ապրանքների գները և ծառայությունների սակագները աճել են համապատասխանաբար 0.5% և 8.5%-ով:

Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) 2.7% գնանկումը հիմնականում պայմանավորվել է «Բանջարեղեն և կարտոֆիլ» (25.3%), «Հացամթերք» (2.5%), «Միրգ» (10.3%), «Ձկնամթերք» և «Ձուլ» ապրանքախմբերում գրանցված գնանկմամբ, որոնք ապրանքախմբի գնանկմանը նպաստել են համապատասխանաբար 2.2, 0.7, 0.5, 0.2 և 0.2 տոկոսային կետերով: Միևնույն ժամանակ, «Մսամթերք» (5.9%), «Շաքարավազ» (15.2%), «Սուրճ, թեյ, կակաո» (12.6%) և «Կաթնամթերք» (3.8%) ապրանքախմբերի գնաճը նպաստել է ապրանքախմբի գնաճին համապատասխանաբար 1.0, 0.4, 0.3 և 0.3 տոկոսային կետով:

«Ոչ պարենային ապրանքներ» ապրանքախմբի 0.5% գնաճը հիմնականում ձևավորվել է «Կոշկեղեն» (11.1%), «Հագուստ և զործվածք» (6.0%), «Լվացող միջոցներ» (9.3%), «Դեղամիջոցներ» (7.5%) և «Գեղահարդարման ապրանքներ» (5.3%) ապրանքախմբերի գնաճի հետևանքով, որոնք նպաստել են տվյալ ապրանքախմբի գնաճին համապատասխանաբար 1.3, 0.9, 0.8, 0.7 և 0.4 տոկոսային կետերով: Միևնույն ժամանակ, «Անձնական օգտագործման մեքենաներ և բենզին» (82.9%), «Վառելիք» (90.8%), «Մշակույթի ապրանքներ» (95.1%) ապրանքախմբերի գնանկումները նվազեցրել են ապրանքախմբի գնաճը համապատասխանաբար 3.6, 0.4 և 0.3 տոկոսային կետով:

«Ծառայություններ» ապրանքախմբի 8.5% գնաճի վրա հիմնականում ազդեցություն է ունեցել «Բուժապասարկման ոլորտի ծառայությունների» սակագների՝ 14.8%, «Բնակարանային, կոմունալ ծառայությունների»՝ 8.1%, «Կրթության համակարգի»՝ 4.2%, «Տրանսպորտի»՝ 4.2%, «Հանրային սննդի»՝ 8.2% և «Այլ կենցաղային ծառայությունների»՝ 6.0% սակագների աճը, որոնք ապրանքախմբի գնաճին նպաստել են համապատասխանաբար 4.5, 2.0, 0.6, 0.6, 0.4 և 0.2 տոկոսային կետով: «Կապի» ծառայությունների սակագները նշված ժամանակահատվածում նվազել են 2.8%-ով՝ մեղմելով ապրանքախմբի գնաճը 0.2 տոկոսային կետով:


Սպառողական գների ինդեքսը 2009 թ. առաջին եռամսյակում 12-ամսյա կտրվածքով՝ ըստ հիմնական ապրանքային խմբերի և ծառայությունների



2009թ. առաջին եռամսյակում, 2008թ. թվականի դեկտեմբերի համեմատ, հանրապետությունում գրանցվել է 0.7% գնաճ (նախորդ տարվա առաջին եռամսյակում՝ 4.8% և 2007թ. նույն ժամանակահատվածում՝ 2.0% գնաճ): Ընդ որում՝ «Պարենային ապրանքների» 0.3%, «Ոչ պարենային ապրանքների» 1.4% և «Ծառայությունների» սակագների 1.0% աճը գնաճի ընդհանուր մակարդակի վրա ազդել է համապատասխանաբար 0.2, 0.2 և 0.3 տոկոսային կետով:

2009թ. հունվար-մարտին, 2008թ. հունվար-մարտի համեմատ, գնաճը կազմել է 2.0%, ընդ որում՝ 2008 և 2007թթ. ցուցանիշները կազմել են համապատասխանաբար՝ 7.9 և 4.8%: Գնաճի 2.0% ցուցանիշը պայմանավորվել է ծառայությունների սակագների 9.6% աճով (նպաստումը գնաճի մակարդակին՝ 2.9 տոկոսային կետ), իսկ «Պարենային» և «Ոչ պարենային» ապրանքախմբերի գնանկումները (համապատասխանաբար՝ 1.0 և 1.4%) մեղմել են գնաճի ցուցանիշը 0.5 և 0.2 տոկոսային կետով:

**Գնաճը և բնականոն գնաճը 2006 - 2009 թթ. (% , նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ)**



2009թ. մարտին, նախորդ տարվա մարտի համեմատ, բնականոն գնաճը կազմել է 3.33%՝ հիմնականում պայմանավորված «Ծառայություններ հիվանդանոցների վիրաբուժական բաժանմունքների» (18.5%), «Տավարի միս» (4.5%), «Ծառայություններ ատամնաբուժական, ատամների բուժման» (13.6%), «Կարագ» (9.1%), «Ծառայություններ առողջարանների և այլ առողջարանային հաստատությունների՝ կացության, բուժման և սպասարկման ապահովմամբ» (12.1%), «Եփած երշիկ» (9.4%), «Ծառայություններ բժշկական լաբորատորիաների (ռենտգեն նկար)» (20.1%) և «Ծառայություններ միջնակարգ կրթության՝ դպրոցի ուսման վարձ» (9.6%) ապրանքատեսակների և ծառայությունների գների աճով, որոնք բնականոն գնաճի ցուցանիշի վրա ազդեցություն են ունեցել համապատասխանաբար 0.98, 0.20, 0.15, 0.13, 0.13, 0.12, 0.11, 0.11 տոկոսային կետով:

**Գնաճի տատանումների վիճակագրական վերլուծություն**

Սպառողական գների ինդեքսի և սպառողական զանբյուղի առանձին ապրանքախմբերի գների ինդեքսների փոփոխությունների ուսումնասիրման և դրանց տատանումները պայմանավորող գործոնների բացահայտման նպատակով 2006 թվականի ապրիլից մինչև 2009 թվականի մարտն ընկած ժամանակահատվածի համար տարանջատվել և գնահատվել է վիճակագրության տեսության մեջ ընդունված երեք բաղադրատարրերի (տրենդի, սեզոնայնության և պատահական տարրի) ազդեցությունը<sup>2</sup>:

Հաշվարկները ցույց են տալիս, որ 2006թ. ապրիլ-2009թ. մարտ ժամանակահատվածում, 2005թ. ապրիլ-2008 մարտի համեմատ, նվազել է ՍԳԻ-ի վրա տրենդի (10.8%) և սեզոնայնության (0.1%) բաղադրատարրերի և աճել է պատահական տարրի (10.9%) ազդեցությունը:

**Գների ամսական ինդեքսների տատանումները պայմանավորող բաղադրատարրերի տեսակարար կշիռները (2006 թ. ապրիլ - 2009թ. մարտ) (%)**

Անվանում	Տրենդ	Սեզոնայնություն	Պատահական տարր	Ընդամենը
ՍԳԻ	0.0	68.7	31.3	100.0
1. Հացամթերք	0.6	27.4	72.0	100.0
2. Սսամթերք	0.9	50.5	48.6	100.0
3. Չկնամթերք	1.0	49.4	49.5	100.0
4. Կաթնամթերք և յուղեր	2.1	39.1	58.8	100.0
5. Միրգ և բանջարեղեն	0.0	90.9	9.1	100.0

<sup>2</sup> Հաշվարկների մեթոդաբանությունը ներկայացված է «Սղաճը Հայաստանի Հանրապետությունում. 1999 թ. 2-րդ կիսամյակ» պարբերականում:

6. Այլ մթերք	0.0	47.7	52.3	100.0
7. Ոչ ոգելից խմիչք	3.2	25.9	70.9	100.0
8. Ոգելից խմիչք և ծխախոտ	15.9	24.9	59.2	100.0
9. Հագուստ և կոշիկեղեն	7.7	51.2	41.1	100.0
10. Բնակվարձ, էլեկտրաէներգիա, վառելիք	3.8	34.4	61.8	100.0
11. Տնային գույք	0.0	25.2	74.8	100.0
12. Բուժսպասարկում և դեղորայք	1.1	33.3	65.6	100.0
13. Տրանսպորտ և կապ	0.9	31.0	68.1	100.0
14. Հանգիստ, մշակույթի արձանքներ և ծառայություններ	0.0	92.7	7.3	100.0

Ըստ ապրանքախմբերի երեք բաղադրատարրերի (տրեմդի, սեզոնայնության և պատահական տարրի) ազդեցությունը փոփոխվել է տարբեր կերպ: Սեզոնայնության բաղադրատարրը ամենամեծ ազդեցությունն ունի «Հանգիստ, մշակույթի ապրանքներ և ծառայություններ», «Միրգ և բանջարեղեն», «Մսամթերք և ձկնամթերք», «Հագուստ և կոշիկ», «Այլ մթերք» ապրանքախմբերում:

Պատահական տարրի ազդեցությունը ամենամեծն է «Տնային գույք», «Հաց և հացամթերք», «Ոչ ոգելից խմիչք և ծխախոտ», «Տրանսպորտ և կապ», «Բուժսպասարկում և դեղորայք», «Այլ ապրանքներ և ծառայություններ», «Բնակվարձ, էլեկտրաէներգիա և վառելիք» ապրանքախմբերում:

Տրեմդի ազդեցությունը ամենամեծն է «Ոգելից խմիչք և ծխախոտ», «Այլ ապրանքներ և ծառայություններ», «Հագուստ և կոշիկեղեն», «Բնակվարձ, էլեկտրաէներգիա, վառելիք» ապրանքախմբերում:

Սպառողական գների ինդեքսների տատանողականությունն ուսումնասիրվել է նաև յուրաքանչյուր ապրանքախմբի ամսական գների ինդեքսների տատանման գործակիցների օգնությամբ:

*Գների ամսական ինդեքսների տատանման գործակիցները 2007, 2008 և 2009 թթ. 1-ին եռամսյակում (%)*

Անվանում	2007	2008	2009
ՍԳԻ	1.6	0.7	1.8
1. Հացամթերք	0.1	3.7	2.7
2. Մսամթերք	0.6	0.4	1.0
3. Ձկնամթերք	6.7	14.9	12.1
3. Կաթնամթերք և յուղեր	0.4	1.9	3.1
4. Միրգ և բանջարեղեն	14.8	13.6	16.4
5. Այլ մթերքներ	1.0	1.4	1.7
6. Ոչ ոգելից խմիչք	0.1	0.4	0.2
7. Ոգելից խմիչք և ծխախոտ	0.0	0.2	0.4
8. Հագուստ և կոշիկ	0.2	0.1	0.9
9. Բնակվարձ, էլեկտրաէներգիա, վառելիք	1.1	0.0	0.2
10. Տնային գույք	0.2	0.2	1.4
11. Բուժսպասարկում և դեղորայք	1.0	2.8	1.2
12. Տրանսպորտ և կապ	0.5	0.1	1.9
14. Հանգիստ, մշակույթի ապրանքներ և ծառայություններ	0.1	0.1	0.1

Աղյուսակի ցուցանիշները վկայում են, որ ՍԳԻ տատանողականությունը հիմնականում պայմանավորվել է պարենային ապրանքների՝ առավելապես «Միրգ ու բանջարեղեն» և «Ձկնամթերք» ապրանքախմբերի գների բարձր տատանողականությամբ:

## 2.2. ԳՆԱԾԻ ՆՊԱՏԱԿԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

2009 թվականի առաջին եռամսյակն առանձնահատուկ էր այն առումով, որ մակրոտնտեսական զարգացումներն ընթանում էին համաշխարհային տնտեսական և ֆինանսական ճգնաժամի շարունակական խորացման պայմաններում: Դա համաշխարհային տնտեսությունում ստեղծել էր գնանկումային միջավայր, որն անդրադարձել էր նաև ներքին գների վրա՝ խնդիրներ առաջացնելով գնաճի նպատակի իրագործման հարցում: Այսպես, առաջին եռամսյակում արձանա-

գրվել է ընդամենը 0.7% գնաճ, որի պարագայում 12-ամսյա գնաճը կազմել է 1%՝ 1.5 տոկոսային կետով ցածր նպատակային  $4 \pm 1.5\%$  միջակայքի ստորին սահմանից: Սա այն դեպքում, երբ մարտին, պայմանավորված ամսվա սկզբին դրամի փոխարժեքի կտրուկ արժեզրկմամբ, առաջին անգամ, նախորդ տարիների մարտ ամիսների համեմատ (1995 թ. ի վեր) գրանցվել է ամենաբարձր գնաճը՝ 1.4%:

Այդուհանդերձ, առաջին եռամսյակում 12-ամսյա գնաճը բավականին մոտ է եղել նախորդ տարվա դեկտեմբերին այդ ժամանակահատվածի համար կանխատեսված 1.9% ցուցանիշին<sup>3</sup>, մինչդեռ զգալի շեղվել է մեկ տարի առաջ 12-ամսյա հորիզոնով արված 6.9% կանխատեսումից<sup>4</sup>: Ի դեպ, այդ ժամանակահատվածում առաջին 6 ամսում գերակայել են գնաճային ռիսկերն ու դրանից ելնելով՝ 2008թ. հունիսին պահպանվել է 2009թ. առաջին եռամսյակի համար կանխատեսված գնաճի բարձր ցուցանիշ (7.1%): 2008թ. երկրորդ կեսին, հատկապես չորրորդ եռամսյակում, երբ թե՛ արտաքին և թե՛ ներքին միջավայրերի գնաճային ճնշումները մեղմվել էին՝ պայմանավորված համաշխարհային տնտեսական և ֆինանսական խորացող ճգնաժամի ազդեցությամբ, արդեն սեպտեմբերին և դեկտեմբերին 2009թ. առաջին եռամսյակում գնաճի սպասվող ցուցանիշները ճշգրտվել են իջեցման ուղղությամբ. կանխատեսվել են համապատասխանաբար 4.5% և 1.9% (տե՛ս հավելված 3):

2009թ. առաջին եռամսյակին նախորդած մեկ տարում գնաճի իրագործման գործընթացն ուղեկցվել է հետևյալ դրսևորումներով: 2008թ. երկրորդ և երրորդ եռամսյակներում արձանագրվել են 12-ամսյա գնաճի բավականին բարձր ցուցանիշներ՝ համապատասխանաբար 9.6% և 11.3%, որը հիմնականում պայմանավորվել է ներմուծվող ապրանքների, մասնավորապես՝ «Հացամթերք» և «Կենդանական ու բուսական յուղ» ապրանքախմբերի գների աճի՝ գնաճին համապատասխանաբար 5.4 ու 4.7 տոկոսային կետ և 1.7 ու 1.1 տոկոսային կետ նպաստումներով, ինչպես նաև «Բենզին և դիզելային վառելիք» ապրանքախմբի գների աճի՝ համապատասխանաբար 0.5 և 0.7 տոկոսային կետ նպաստումով: Պահպանվել են նաև բուժսպասարկման ծառայությունների սակագների աճի բարձր տեմպերը, որոնք գնաճին նպաստել են համապատասխանաբար 1.6 և 1.7 տոկոսային կետով: Ընդ որում, չնայած երրորդ եռամսյակում արտաքին գնաճային ճնշումները որոշ չափով թուլացել էին, այնուամենայնիվ, այդ ժամանակահատվածում գրանցվել է 12-ամսյա ավելի բարձր գնաճ՝ պայմանավորված արդեն օգոստոսից վերոնշյալ գործոններին գումարված նոր գնաճային ռիսկերով: Դրանք կապված էին տարածաշրջանում առկա հակամարտության պատճառով Հայաստան ապրանքների ներմուծման արգելքների հետ:

Արձագանքելով գնաճի նման զարգացումներին և կարևորելով գնաճային սպասումների մեղմման ու նպատակային թիրախից շեղումների նվազեցման խնդիրը՝ ԿԲ-ն այդ ժամանակահատվածում ևս շարունակել է խստացնել դրամավարկային պայմանները՝ բարձրացնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը 1.5 տոկոսային կետով (ամսական 0.25-ական տոկոսային կետ)՝ սեպտեմբերին հասցնելով 7.75%-ի:

Չորրորդ եռամսյակից սկսած՝ իրավիճակը էականորեն փոխվել է՝ կապված համաշխարհային տնտեսական ճգնաժամի խորացման հետևանքով համաշխարհային տնտեսական աճի տեմպերի դանդաղման պայմաններում ստեղծված գնանկումային միջավայրի և դրա աստիճանաբար խորացման հետ, որն ակնհայտորեն արտացոլվում էր պարենային և ոչ պարենային ապրանքների ներքին շուկաներում՝ հանգեցնելով ընդհանուր գնաճի տեմպերի զգալի նվազման: Արդյունքում՝ և՛ 2008թ. չորրորդ, և՛ 2009թ. առաջին եռամսյակներում, որոնք սովորաբար բարձր գնաճային ժամանակահատվածներ են, արձանագրվել է անհամեմատ ցածր եռամսյակային գնաճ՝ համապատասխանաբար 0.9% և 0.7%: Դա արտահայտվել է այդ եռամսյակներում «Հացամթերք» ապրանքախմբի գների նվազմամբ՝ համապատասխանաբար 7.7% և 3.0%-ով (նպաստումը գնաճին՝ -1.1

<sup>3</sup> Տե՛ս դրամավարկային քաղաքականության 2009թ. առաջին եռամսյակի ծրագիրը (2009 թվականի հունվարի 13-ի 77 ԿԲ խորհրդի նիստի արձանագրություն):

<sup>4</sup> Տե՛ս դրամավարկային քաղաքականության 2008թ. երկրորդ եռամսյակի ծրագիրը (2008 թվականի ապրիլի 2-ի 77 ԿԲ խորհրդի նիստի արձանագրություն):

և -0.5 տոկոսային կետով), 2008թ. չորրորդ եռամսյակում բենզինի ու դիզելային վառելիքի գների 29.2% նվազմամբ՝ գնաճին նպաստումը -0.8 տոկոսային կետ և 2009թ. առաջին եռամսյակում «Կենդանական ու բուսական յուղ» ապրանքախմբի գների 6.4% նվազմամբ (նպաստումը գնաճին՝ -0.3 տոկոսային կետ):

Ձևավորված գնանկումային միջավայրը հնարավորություն է ընձեռել ԿԲ-ին թուլացնելու դրամավարկային պայմանները՝ նպատակ ունենալով մեղմել համախառն ներքին արդյունքի տատանողականությունը և նպաստելու տնտեսական աճի տեմպերի պահպանմանը: Ելնելով այդ հանգամանքից՝ ԿԲ խորհուրդը հոկտեմբեր-նոյեմբերին անփոփոխ թողնելով վերաֆինանսավորման տոկոսադրույքը, դեկտեմբերին իջեցրել է 0.5, իսկ հունվար-փետրվարին՝ 0.25-ական տոկոսային կետով՝ սահմանելով 6.75%:

Այդուհանդերձ, 2009թ. մարտը բեկումնային էր այն առումով, որ ՀՀ ԿԲ խորհուրդը, մարտի 3-ին կայացած արտահերթ նիստում արձանագրելով համաշխարհային ֆինանսական և տնտեսական ճգնաժամի պայմաններում ՀՀ ֆինանսական համակարգի արդեն բավականին կայուն, բավարար կապիտալացված, իրացվելի և ճգնաժամի հետագա մարտահրավերներին դիմակայելուն պատրաստ լինելու հանգամանքը, որոշում կայացրեց սահմանափակել արտարժույթային շուկայում Կենտրոնական բանկի միջամտությունը՝ հետագայում միջամտելով միայն փոխարժեքի կտրուկ տատանումները հարթելու նպատակով: Նշվեց նաև, որ դրամավարկային քաղաքականության հետագա շեշտադրումները գների կայունության և ֆինանսական կայունության խնդիրներից տեղափոխվում են գների կայունության և տնտեսական ակտիվության խթանման խնդիրների համակցմանը: Եվ, չնայած համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում միջազգային շուկաներում պահպանվող գնանկումային միջավայրը և ներքին պահանջարկի աճի տեմպերի դանդաղումը նպաստում էին ցածր գնաճի ձևավորմանը, այնուամենայնիվ ազգային արժույթի սպասվող արժեզրկման պայմաններում իրատեսական էին դառնում գնաճի նպատակային թիրախի գերազանցման ռիսկերը: Վերջին հանգամանքով էլ պայմանավորված՝ ԿԲ խորհուրդը բարձրացրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը 1.0 տոկոսային կետով՝ սահմանելով 7.75%:

Արդյունքում, մարտի սկզբից դրամի փոխարժեքը կտրուկ արժեզրկվել է, որն էլ հանգեցրել է որոշ ապրանքախմբերի գների բարձրացման՝ ձևավորելով գնաճի համեմատաբար բարձր ցուցանիշ: Ընդ որում, ըստ ԿԲ գնահատումների, ապրանքների գների ճշգրտումը կշարունակվի նաև առաջիկա ամիսներին, որն արդեն կարտացոլվի երկրորդ եռամսյակի գնաճի ցուցանիշում: Մարտին արձանագրված գնաճը հիմնականում պայմանավորվել է շաքարավազի, «Կենդանական և բուսական յուղ», «Հացամթերք» ապրանքախմբերի գների, ինչպես նաև բենզինի և դիզելային վառելիքի գների աճով, որոնք գնաճին նպաստել են գումարային 0.84 տոկոսային կետով: Որոշակի բարձրացել են նաև դեղամիջոցների գները, օդային տրանսպորտի, բուժսպասարկման ծառայությունների սակագները, որոնց նպաստումը գնաճին ընդհանուր հաշվով կազմել է 0.4 տոկոսային կետ:

### 3. ԳՆԱԾԻ ԳՈՐԾՈՆՆԵՐ


#### 3.1. ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Համաձայն ԱՄՅ գնահատումների՝ 2008թ. համաշխարհային տնտեսական աճը կազմել է ընդամենը 3.2% (նախորդ տարի՝ 5.2%): Սա հիմք է հանդիսացել ԱՄՅ և այլ ֆինանսական կազմակերպությունների համար՝ վերանայելու 2009թ. տնտեսական աճի կանխատեսումները. 2009թ. համար համաշխարհային տնտեսական անկումը կանխատեսվել է 1.3%: Իրավիճակը համաշխարհային տնտեսությունում ողջ եռամսյակի ընթացքում հուսադրող չէր. տնտեսական անկումը շարունակվել է նաև բոլոր զարգացած և զարգացող երկրներում: Սակայն սպասվում է, որ այդ երկրների կառավարությունների կողմից իրականացվող հակաճգնաժամային միջոցառումները հետագայում որոշակի արդյունք կունենան, ինչը հնարավոր կդարձնի համաշխարհային տնտեսական իրավիճակի բարելավումն արդեն 2009թ. վերջից:

Դրա հետ մեկտեղ, 2009թ. առաջին եռամսյակում ԱՄՆ դոլարը փոքր-ինչ արժևորվել է, իսկ նավթի միջազգային գները շարունակել են նվազել: Պարենային ապրանքների միջազգային գները, մասնավորապես՝ հացահատիկի և բրնձի, նույնպես նվազել են՝ պայմանավորված տնտեսական ճգնաժամի խորացմամբ և համաշխարհային պահանջարկի նվազմամբ:


Եվրոյի փոխարժեքը առաջին եռամսյակում տատանվել է եվրոյի դիմաց 1.3 ԱՄՆ դոլարի սահմաններում, ինչը հիմնականում պայմանավորվել է շուկայի մասնակիցների՝ Եվրոգոտու տնտեսական հեռանկարների վերաբերյալ սպասումների վատթարացմամբ:

*ԱՄՆ դոլարը առաջին եռամսյակում հիմնականում կայուն է մնացել եվրոյի նկատմամբ*



2009 թվականի առաջին եռամսյակի սկզբին նավթի գները կայունացել են. «Brent» տեսակի նավթի գինը տատանվել է 40-50 ԱՄՆ դոլար՝ 1 բարելի դիմաց միջակայքում: Դրա արդյունքում նավթի գներն առաջին եռամսյակում նվազել են տ/տ 53%-ով՝ նախորդ եռամսյակի 37%-ի փոխարեն: Եռամսյակի ընթացքում նավթի գների ցածր մակարդակի պահպանման հիմնական պատճառը համաշխարհային տնտեսական ճգնաժամի վերականգնման հետ կապված անորոշությունն էր և նավթի ցածր պահանջարկը:

*Նավթամթերքների գները պահպանվել են ցածր մակարդակում ողջ եռամսյակի ընթացքում*



Հացահատիկի գներն առաջին եռամսյակում տ/տ նվազել են միջինը 44%-ով: Դրանք տատանվել են 6-7 ԱՄՆ դոլար՝ մեկ բուշելի դիմաց միջակայքում: 2008/2009 տարում հացահատիկի բերքը կազմել է մոտ 682 մլն տոննա՝ նախորդ տարվա 611 մլն տոննայի փոխարեն: Դրա արդյունքում հացահատիկի համաշխարհային պաշարները վերջապես փոքր-ինչ կավելանան՝ մոտ 36 մլն տոննայով՝ կազմելով 158 մլն տոննա: Բերքի՝ առավել մեծ չափերի ավելացում է ակնկալվում 12 նախկին խորհրդային երկրներում՝ 93 մլն տոննայից 115 մլն տոննա, այդ թվում՝ Ռուսաստանում՝ 49 մլն տոննայից 63.7 մլն տոննա, Ուկրաինայում՝ 14 մլն տոննայից 26 մլն տոննա:

Բրնձի գները եռամսյակի ընթացքում նույնպես շարունակել են նվազել՝ նախորդ եռամսյակի համեմատ մոտ 16%-ով:


Նախ դիտարկենք համաշխարհային տնտեսության մեծ մասը կազմող և ՀՀ հիմնական գործընկեր երկրների՝ ԱՄՆ-ի, Եվրոգոտու և Ռուսաստանի, այնուհետև՝ տարածաշրջանի հարևան երկրների տնտեսական զարգացումները:

**Ամերիկայի Միացյալ Նահանգներում** արդեն երեք եռամսյակ անընդմեջ գրանցվում է տնտեսական անկում<sup>5</sup>. 2009 թվականի առաջին եռամսյակում, ըստ նախնական գնահատումների, այն կազմել է եռ/եռ 6.1% (նախորդ եռամսյակում՝ 6.3%): Անկման հիմնական պատճառը համախառն ներքին ներդրումների նվազումն է, որը հանգեցրել է 8.8 տոկոսային կետով ՀՆԱ նվազմանը: Մյուս կողմից, անձնական սպառողական ծախսումների և զուտ արտահանման նպաստումը ՀՆԱ-ին եղել է դրական՝ համապատասխանաբար 1.5 և 2.0 տոկոսային կետ:

Զուտ արտահանման պակասուրդը ՀՆԱ-ում 2008թ. չորրորդ եռամսյակում կազմել է 2.4% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 5%): Նախորդ եռամսյակի (3.8%) համեմատ այս ցուցանիշը կրճատվել է, որին նպաստել է ներմուծման կրճատումը և՛ քանակական, և՛ արժեքային արտահայտությամբ: Առաջին եռամսյակում ԱՄՆ դոլարի արժևորումը (եվրոյի նկատմամբ տ/տ 15%) ևս իր ազդեցությունն է ունեցել ներմուծվող հումքային ապրանքների դոլարային գների նվազման վրա:

2009 թվականի առաջին եռամսյակում ԱՄՆ-ում գնաճը էականորեն նվազել է՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ մնալով անփոփոխ (2008թ. չորրորդ եռամսյակում տ/տ գնաճը 1.6% էր), ինչը հիմնականում պայմանավորվել է ողջ եռամսյակի ընթացքում ապրանքային և վառելիքի շուկայում գների ցածր մակարդակի պահպանմամբ: 2009 թվականի առաջին եռամսյակում տնտեսական անկման և գնաճի կտրուկ դանդաղման պայմաններում Ֆեդերալ պահուստային համակարգը շարունակել է «քանակական խթանման» քաղաքականությունը՝ միևնույն ժամանակ պահպանելով ֆեդերալ ֆոնդերի նպատակային տոկոսադրույքների 0-0.25% նպատակային միջակայքը:

*ԱՄՆ-ում երեք եռամսյակ անընդմեջ գրանցվում է տնտեսական անկում*




**Եվրոգոտու** տնտեսական անկումը, ըստ Եվրոստատի նախնական գնահատումների, 2009 թվականի առաջին եռամսյակում կազմել է տ/տ 4.6%, իսկ եռ/եռ՝

<sup>5</sup> Աղբյուրը՝ Bureau of Economic Analysis, US Department of Commerce:

2.5%: Միևնույն ժամանակ, 2009 թ. առաջին եռամսյակում Եվրոգոտու առևտրային հաշվեկշռի ավելցուկը կազմել է 0.4 մլրդ եվրո՝ նախորդ տարվա նույն եռամսյակի 2.3 մլրդ եվրո պակասուրդի փոխարեն:

*Եվրոգոտում և տնտեսական անկումը շարունակվում է*



Սպառողական գների ինդեքսի աճը 2009 թ. առաջին եռամսյակում շարունակել է դանդաղել՝ կազմելով տ/տ 1%: Եվրոպական կենտրոնական բանկը եռամսյակի ընթացքում տոկոսադրույքները նվազեցրել է 1 տոկոսային կետով՝ սահմանելով 1.5%:

**Ռուսաստանի** տնտեսությունում, նախորդ տարիների բարձր տնտեսական աճից հետո, 2009թ. առաջին եռամսյակում արձանագրվել է անկում, որը, ըստ Ռուսաստանի պետական վիճակագրության դաշնային ծառայության գնահատումների, կազմել է 9.5%: Վերջինիս վրա ազդեցություն են ունեցել համաշխարհային տնտեսության անբարենպաստ զարգացումները և հետագա վատատեսական սպասումները:

Տնտեսության բոլոր ճյուղերում արձանագրվել է բացասական աճ. արդյունաբերության ճյուղում անկումը 2009թ. առաջին եռամսյակում կազմել է տ/տ 14.3%, ոչ արտահանելի ճյուղերում՝ առևտրի և շինարարության, համապատասխանաբար տ/տ 1.1% և 19.3%:

Ըստ որոշ վերլուծաբանների նոր կանխատեսումների՝ վարկային պայմանների խստացման և աշխատանքի շուկայում անբարենպաստ զարգացումների պայմաններում 2009թ. տնտեսական անկման ցուցանիշը կնվազի մինչև 3.6%: ԱՄՆ կողմից տրվել է առավել վատատեսական սցենար, ըստ որի՝ տնտեսական անկումը կհասնի 6%-ի:

2009թ. առաջին եռամսյակում կրճատվել է ընթացիկ հաշվի հավելուրդը՝ կապիտալի և ֆինանսական միջոցների արտահոսքի պայմաններում: Ընթացիկ հաշվի հավելուրդը նվազել է տ/տ 26.9 մլրդ ԱՄՆ դոլարով և կազմել 11.1 մլրդ ԱՄՆ դոլար: Կապիտալի հաշվով միջոցների արտահոսքը հիմնականում պայմանավորվել է մասնավոր հատվածում (առանց բանկերի) դոլարայնացման մակարդակի բարձրացմամբ: Վճարային հաշվեկշռի հոսքերի պայմաններում Ռուսաստանի կենտրոնական բանկի պահուստները նվազել են 31.1 մլրդ ԱՄՆ դոլարով և մարտի վերջի դրությամբ կազմել են 384 մլրդ ԱՄՆ դոլար:

Վճարային հաշվեկշռի պակասուրդի և փոխարժեքի առավել ճկուն քաղաքականության իրականացման պայմաններում 2009թ. առաջին եռամսյակում արձանագրվել է ռուսական ռուբլու կտրուկ արժեզրկում, ինչը նախապես հայտարարված սահմաններում էր: Ռուբլու անվանական միջին փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 24.6%-ով՝ նախորդ եռամսյակի միջինի նկատմամբ, իսկ տ/տ արժեզրկումը կազմել է մոտ 40%: Ըստ Ռուսաստանի կենտրոնական բանկի գնահատումների՝ ռուբլու ձևավորված փոխարժեքը երկարժուժային զանբյուրի նկատմամբ կայունացել է հավասարակշռված մակարդակում:

Ռուսաստանի տնտեսության հիմնական ռիսկերի թվում առանձնացվում է դեռևս պահպանվող բարձր գնաճը, որն անվանական փոխարժեքի բարձր արժեզրկման պայմաններում առաջին եռամսյակում կազմել է տ/տ 13.8% (նախորդ

եռամսյակում՝ 13.7%): Նշված ժամանակահատվածում գնաճի, ինչպես նաև կապիտալի արտահոսքի խնդիրներից ելնելով՝ Ռուսաստանի կենտրոնական բանկը վերաֆինանսավորման տոկոսադրույքը պահպանել է անփոփոխ՝ 13% մակարդակում:

### **Մակրոտնտեսական իրավիճակը հարևան երկրներում<sup>6</sup>**

**Թուրքիա.** Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը երկրում վաղ դրսևորվել է 2008թ. չորրորդ եռամսյակում, երբ վերջին 7 տարիների ընթացքում առաջին անգամ արժանագրվել է խորը տնտեսական անկում՝ տ/տ 6.2%<sup>7</sup>: պայմանավորված ներքին պահանջարկի 10.6% նվազմամբ: Ներքին պահանջարկի նվազման վրա էական ազդեցություն է ունեցել մասնավոր ներդրումների զգալի՝ 24%-ով նվազումը: Մյուս կողմից՝ զուտ արտաքին պահանջարկը 5 տոկոսային կետով դրական նպաստում է ունեցել (ներմուծման նվազումը գերազանցել է արտահանման նվազումը): Տնտեսական աճի տեմպերի կտրուկ անկումը հիմնականում պայմանավորվել է մշակող արդյունաբերության, շինարարության և մեծածախ ու մանրածախ առևտրի ծյուղերում զգալի անկումներով՝ համապատասխանաբար 10.8%, 13.4% և 15.4%: Արդյունքում՝ 2008թ-ին իրական ՀՆԱ աճը կազմել է ընդամենը 1.1%:

Ներքին պահանջարկի նվազման ազդեցությունը ընթացիկ հաշվի վրա արտահայտվել է 2009թ. հունվարից, երբ նախորդ տարվա ընթացիկ հաշվի պակասուրդը վերափոխվել է հավելուրդի: Այսպես՝ հունվար-փետրվարին ընթացիկ հաշվի հավելուրդը կազմել է 0.6 մլրդ ԱՄՆ դոլար (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 8.0 մլրդ ԱՄՆ դոլար պակասուրդ): Վերջինս արտահանման նվազման տեմպերի նկատմամբ ներմուծման նվազման տեմպերի կրկնակի գերազանցման արդյունք էր (արտահանման նվազումը կազմել է 23.6%, իսկ ներմուծմանը՝ 45.6%): Կապիտալի արտահոսքը 2009թ. հունվար-փետրվար ամիսներին պահպանվել է (կազմել է 2.7 մլրդ ԱՄՆ դոլար), ինչը պայմանավորվել է պորտֆելային ներդրումների և այլ ներդրումների զուտ արտահոսքով: Չնայած կապիտալի մեծ ծավալներով արտահոսքին, այնուամենայնիվ վճարային հաշվեկշիռը հավելուրդով է եղել՝ պայմանավորված «Սխալներ և բացթողումներ» հոդվածով 2.77 մլրդ ԱՄՆ դոլարի զուտ ներհոսքով: Արդյունքում՝ Կենտրոնական բանկի պաշտոնական պահուստներն ավելացել են 274 մլն ԱՄՆ դոլարով:

Թուրքական լիրան 2009 թ. 1-ին եռամսյակում դրսևորել է արժեզրկման միտում՝ չնայած վճարային հաշվեկշռի հավելուրդին: Այս շարժընթացը առավելապես բացատրվում է տնտեսավարող սուբյեկտների՝ հնարավոր ռիսկերից խուսափելու վարքագծով՝ պայմանավորված երկրի ապագա զարգացումների անորոշությամբ: 2009թ. առաջին եռամսյակում թուրքական լիրայի անվանական միջին փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 7.3%-ով, իսկ տ/տ արժեզրկումը կազմել է 37.6%:

2009թ. առաջին եռամսյակում, համաշխարհային ցածր գնաճային միջավայրի պահպանման և ներքին պահանջարկի նշանակալի նվազման պայմաններում, սպառողական գների աճի տեմպերի դանդաղումը շարունակվել է, և գրանցվել է տ/տ 8.4% գնաճ (նախորդ եռամսյակում՝ 10.9%):

Նշված ժամանակահատվածում Կենտրոնական բանկը շարունակել է տոկոսադրույքների իջեցման քաղաքականությունը, որի համար հիմք են հանդիսացել գնաճային ճնշումների թուլացման, տնտեսական ակտիվության անկման խորացման գնահատումները: Մարտի դրությամբ քաղաքականության տոկոսադրույքը նվազեցվել է մինչև 13%, իսկ ապրիլին՝ ևս 75 բազիսային կետով և սահմանվել 12.25% մակարդակում:

**Ադրբեջանի** իրական ՀՆԱ աճը 2009թ. առաջին եռամսյակում կազմել է 4.1%, ընդ որում՝ ոչ նավթային հատվածում՝ 13.7%<sup>8</sup>:

2009 թ. հունվար-մարտին Ադրբեջանում միջին գնաճը կազմել է 8.3%, իսկ 2008թ. դեկտեմբերի համեմատ գրանցվել է գնանկում՝ 2.1%: Պարենային ապրանքների

<sup>6</sup> Հարևան երկրների տնտեսությունների ուսումնասիրումը կարևորվում է այն առումով, որ ենթարկվելով նույնամանա ճգնումների, կարող են անուղղակի ազդել նաև Հայաստանի տնտեսության վրա: 1990-ական թվականների ճգնաժամերը ցույց տվեցին, որ ազդեցության անուղղակի ուղիները՝ արտահանման միևնույն շուկաները, վարկավորող միևնույն կազմակերպությունները կամ երկրները, միևնույն ներդրողները և այլն, ավելի ու ավելի մեծ դերակատարումներ են ունենում տարածաշրջանային տեսանկյունից երկրների տնտեսությունների զարգացումների վրա: Հետևաբար երկրները մշտապես ուշադրություն են դարձնում ոչ միայն գործընկեր, այլ նաև տարածաշրջանային հարևան երկրների մակրոտնտեսական զարգացումների վրա: Ավելացնենք նաև, որ Իրանը ներառված չէ այն պատճառով, որ վերջինիս թվային տվյալները թերի են, ինչպես նաև ստացվում են բավականին ուշ, երբ կորցնում են հրատապությունը:

<sup>7</sup> 2009թ. առաջին եռամսյակի տնտեսական աճի պաշտոնական ցուցանիշները բացակայում են:

<sup>8</sup> <http://abc.az/rus/news/34368.html>.

միջին գնաճը կազմել է 8.9%, ոչ պարենային ապրանքների՝ 8.0%, ծառայությունների՝ 6.8%<sup>9</sup>:

2009 թ. առաջին եռամսյակում իրականացված արտահանման-ներմուծման գործարքների արդյունքում Ադրբեջանում ձևավորվել է ապրանքային հաշվեկշռի դրական մնացորդ՝ 1.2 մլրդ դոլարի չափով: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ արտաքին առևտրի ծավալներն աճել են 1.3 անգամ: 2009 թ. հունվար-մարտ ամիսներին Ադրբեջանի նավթային հատվածում օտարերկրյա ներդրումները կազմել են 530 մլն դոլար, իսկ ոչ նավթային հատվածում՝ շուրջ 1509 մլն դոլար<sup>10</sup>: Ազգային արժույթի կայունության ապահովումը հետզհետե ավելի քանկ է դառնում Ադրբեջանի կենտրոնական բանկի համար, որը այդ նպատակով միայն հունվար – մարտին արժութային շուկայում իրականացրել է ավելի քան 1 մլրդ դոլարի զուտ վաճառք: Արդյունքում 2009 թ. հունվար-մարտին մանաթի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ փոքրիկն աճեցրկվել է՝ 0.2%-ով, իսկ 2009 թ. առաջին եռամսյակի միջին փոխարժեքը տ/տ արժևորվել է 4.75%-ով:

Միջազգային ֆինանսական ճգնաժամի պայմաններում բանկային համակարգի ֆինանսական կայունությանն աջակցելու և տնտեսական ակտիվությունը պահպանելու նպատակով Ադրբեջանի կենտրոնական բանկը 2009 թ. փետրվարի 2-ին վերաֆինանսավորման տոկոսադրույքը իջեցրել է 3%-ով, իսկ մարտի 2-ին՝ ևս 2%-ով՝ սահմանելով 3%: Դրա հետ մեկտեղ, 2.5%-ով կրճատվել է ազգային արժույթով և արտարժույթով պարտադիր պահուստավորման նորմատիվը և սահմանվել 0.5%:

Ադրբեջանի կենտրոնական բանկի արտարժութային պահուստները 2009 թ. հունվար-մարտին նվազել են 19.1%-ով և 2009 թ. ապրիլի 1-ի դրությամբ կազմել 4962 մլն դոլար<sup>11</sup>:

**Վրաստանում** տնտեսական աճը 2008 թ. կազմել է 2.1%, ընդ որում՝ երրորդ և չորրորդ եռամսյակներում գրանցվել է տնտեսական անկում՝ համապատասխանաբար 3.9% և 2.5%<sup>12</sup>: 2008թ. ԴՆԱ կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ են ունեցել պետական կառավարման ոլորտը՝ 14.9%, առևտրի ոլորտը՝ 13.9%, արդյունաբերությունը՝ 13.5%<sup>13</sup> և գյուղատնտեսությունը՝ 8.9%:

2009թ. առաջին եռամսյակում Վրաստանում գնաճը կազմել է տ/տ 7.8%, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ գրանցվել է գնանկում՝ 0.4%: Ընդ որում, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ բոլոր ապրանքային խմբերի գծով գրանցվել է գնանկում, մինչդեռ ծառայությունների գծով՝ 0.6% գնաճ<sup>14</sup>:

2009թ. հունվար-մարտին իրականացված արտահանման-ներմուծման գործարքների արդյունքում Վրաստանում ձևավորվել է ապրանքային հաշվեկշռի բացասական մնացորդ՝ 761.0 մլն դոլարի չափով: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ Վրաստանում ապրանքների արտահանման (ՖՕԲ) ծավալները նվազել են 33.2%-ով և կազմել 220.1 մլն դոլար, իսկ ներմուծման (ՄԻՖ) ծավալները նվազել են 30.1%-ով և կազմել 982.1 մլն դոլար<sup>15</sup>:

Ըստ նախնական տվյալների՝ օտարերկրյա ներդրումների համախառն ներհոսքը 2008թ. ընթացքում կազմել է 1280 մլն դոլար, որը նախորդ տարվա համեմատ կրճատվել է 26.9%-ով: Այդ նույն ժամանակահատվածում շուրջ 32 անգամ ավելացել է պորտֆելային ներդրումների համախառն ներհոսքը և կազմել 692 մլն դոլար<sup>16</sup>: Արտերկրից դրամական փոխանցումների ներհոսքը 2009 թ. հունվար-մարտին կազմել է 51 մլն դոլար, որը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 4 անգամ<sup>17</sup>:

2009 թ. առաջին եռամսյակում ԱՄՆ դոլարի նկատմամբ վրացական լարիի միջին փոխարժեքը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի միջինի համեմատ արժեզրկվել է 6.9%-ով, իսկ 2008թ. դեկտեմբերի համեմատ լարին արժեզրկվել է 0.2%-ով<sup>18</sup>:

<sup>9</sup> Աղբյուրը՝ Ադրբեջանի վիճակագրության կոմիտե. [http://www.azstat.org/sdds/en/P\\_/I/C\\_P.shtml](http://www.azstat.org/sdds/en/P_/I/C_P.shtml):

<sup>10</sup> Աղբյուրը՝ abc.Az, 24 ապրիլի, 2009թ., <<http://abc.az/rus/news/34194.html>>:

<sup>11</sup> Աղբյուրը՝ <http://www.nba.az/default.aspx?go=&id=2186&lng=en>:

<sup>12</sup> Աղբյուրը՝ Վրաստանի ազգային բանկի Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետեն, 2009 թ. հունվար-մարտ, աղյուսակ 1.1: Վրաստանում վիճակագրության նոր համակարգի անցնելու կապակցությամբ 2009թ. առաջին եռամսյակի ԴՆԱ-ի և նրա տարրերի դինամիկային վերաբերող ցուցանիշները կիրառարակվեն 2009թ. հունիսի 30-ին:

<sup>13</sup> Աղբյուրը՝ [http://www.statistics.ge/\\_files/english/nad/GDP%20at%20current%20prices.xls](http://www.statistics.ge/_files/english/nad/GDP%20at%20current%20prices.xls):

<sup>14</sup> Աղբյուրը՝ Վրաստանի ազգային բանկի Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետեն, 2009 թ. հունվար-մարտ, աղյուսակ 1.1:

<sup>15</sup> Աղբյուրը՝ Վրաստանի ազգային բանկի Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետեն, 2009 թ. հունվար-մարտ, աղյուսակ 5.4:

<sup>16</sup> Աղբյուրը՝ Վրաստանի ազգային բանկի Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետեն, 2009 թ. հունվար-մարտ, աղյուսակ 5.3:

<sup>17</sup> Աղբյուրը՝ Վրաստանի ազգային բանկի Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետեն, 2009 թ. հունվար-մարտ, աղյուսակ 5.9:

<sup>18</sup> Աղբյուրը՝ Վրաստանի ազգային բանկի Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետեն, 2009 թ. հունվար-մարտ, աղյուսակ 4.7:

*Միջազգային ֆինանսական ճգնաժամի պայմաններում բանկային համակարգի ֆինանսական կայունությունը ապահովելու նպատակով Վրաստանի ազգային բանկը 2009 թ. առաջին եռամսյակում երկու անգամ՝ փետրվարի 18-ին՝ 1%-ով և մարտի 18-ին՝ 0.5%-ով իջեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ հասցնելով 6.5%-ի<sup>19</sup>։*  
*Վրաստանի ազգային բանկի արտարժութային պահուստները 2009 թ. հունվար-մարտին աճել են շուրջ 1.0%-ով և տարեվերջին կազմել 1493 մլն դոլար<sup>20</sup>։*

### 3.2. ՎՃԱՐԱՅԻՆ ԳԱՇՎԵԿՇԻՌ<sup>21</sup>

2009 թ. առաջին եռամսյակի ընթացքում ԳԳ վճարային հաշվեկշիռը ձևավորվել է համաշխարհային և ներքին տնտեսության անբարենպաստ զարգացումների ներքո։ Դաշվետու եռամսյակում վճարային հաշվեկշիռի՝ նախորդ եռամսյակից դրսևորված միտումները խորացել են։ Այսպես՝ արտահանման նվազումը հիմնականում պայմանավորվել է միջազգային շուկաներում մետաղների գների տ/տ նվազմամբ։ Մյուս կողմից՝ ներքին պահանջարկի թուլացումը վառ դրսևորվել է ներմուծման վարքագծում։ Ներմուծման արձագանքը ներքին և արտաքին զարգացումներին առավելապես վառ արտահայտվել է այս եռամսյակում, երբ արձանագրվել է ներմուծման նվազում (նախորդ եռամսյակում ներմուծման աճը դեռևս պահպանվել էր)։ Վերջին տարիների բարձր աճից հետո առաջին անգամ արձանագրվել է մասնավոր տրանսֆերտների նվազում, ինչը հիմնականում պայմանավորվել է Ռուսաստանի տնտեսության<sup>22</sup> անկմամբ և հետագա վատատեսական սպասումներով։ Նշված զարգացումները հանգեցրել են ընթացիկ հաշվի պակասուրդի աճի՝ չնայած առևտրի հաշվեկշիռի բարելավմանը։

Մասնավոր հատվածի դոլարայնացման հետևանքով գրանցված խոշոր արտահոսքի պայմաններում կապիտալի զուտ ներհոսքը գրեթե զրոյական է եղել, ինչը հանգեցրել է համախառն արտաքին պահուստների նշանակալի կրճատման։

2009թ. առաջին եռամսյակում, նախորդ տարվա վերջի համեմատ, նավթի միջազգային գները փոքր-ինչ բարձրացել են, սակայն դեռևս բավականին ցածր մակարդակի վրա են։ Նմանատիպ շարժընթաց է գրանցվել նաև մետաղների շուկաներում՝ հատկապես պղնձի։

Նշված զարգացումների հետևանքով ապրանքների արտահանման և ներմուծման դոլարային գները նվազել են համապատասխանաբար տ/տ 39.3% և 10.8%-ով։ Արտահանման և ներմուծման իրական ծավալների նվազումը, գների նվազման հետ մեկտեղ, հանգեցրել է արտահանման և ներմուծման դոլարային ծավալների տ/տ 47.8% և 21.3% նվազման։ Արդյունքում՝ թեպետ առևտրային հաշվեկշիռի պակասուրդը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ նվազել է, այնուամենայնիվ, ընթացիկ հաշվի պակասուրդը խորացել է այլ հոսքերի նվազման հետևանքով։

Համաշխարհային տնտեսության անբարենպաստ զարգացումներով պայմանավորված՝ հաշվետու եռամսյակում արտաքին հատվածից փոխանցվող գնանկունային ազդեցությունները պահպանվել են։

### Ընթացիկ հաշիվ

2009 թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքները շարունակել են արտահայտվել ներքին պահանջարկի թուլացմամբ, ինչը դրսևորվել է ներմուծման նվազման միջոցով։ Մասնավոր տրանսֆերտների և սեզոնային աշխատողների եկամուտների ներհոսքը վերջին տարիների բարձր աճից հետո առաջին անգամ նշանակալիորեն նվազել է։ Արդյունքում՝ թեպետ առևտրային հաշվեկշիռի պակասուրդը նվազել է, այնուամենայնիվ, այլ հոսքերի

<sup>19</sup> Վրաստանի ազգային բանկը 2009 թ. ապրիլի 15-ին հերթական անգամ իջեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.5%-ով՝ սահմանելով 6%։

<sup>20</sup> Աղբյուրը՝ Վրաստանի ազգային բանկի Դրամավարկային և բանկային վիճակագրության բյուլետեն, 2009 թ. հունվար-մարտ, աղյուսակ 5.1։

<sup>21</sup> 2009 թ. առաջին եռամսյակի ցուցանիշները ԳԳ կառնխատեսումներն են։

<sup>22</sup> Մասնավոր փոխանցումների գերակշիռ մասը ստացվում է Ռուսաստանից։

նվազման հետևանքով ընթացիկ հաշվի պակասուրդն առաջին եռամսյակում ավելացել է տ/տ 57.7 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 361.6 մլն ԱՄՆ դոլար, իսկ կշիռը ՀՆԱ-ում կազմել է 25.5%՝ նախորդ տարվա նույն եռամսյակի 19.2%-ի փոխարեն:

2009 թ. առաջին եռամսյակում առևտրային հաշվեկշռի պակասուրդը նվազել է 35.5 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 438.6 մլն ԱՄՆ դոլար: Արտահանման և ներմուծման նվազումը կազմել է համապատասխանաբար տ/տ 47.8% և 21.3%, իսկ առևտրային հաշվեկշռի լավացումը պայմանավորվել է արտահանման նվազման նկատմամբ ներմուծման ծավալների առաջանցիկ նվազմամբ:

Արտահանման նվազումը հիմնականում պայմանավորվել է համաշխարհային շուկաներում մետաղների գների տ/տ նվազմամբ: Արձանագրվել են գրեթե բոլոր ապրանքախմբերի<sup>23</sup> արտահանման նվազման բարձր տեմպեր: Նշենք նաև, որ ընդհանուր արտահանման իրական ծավալները նվազել են, չնայած առաջին եռամսյակում երկաթամիահավվածքի, չզտված պղնձի և ոսկու արտահանման իրական ծավալները տ/տ աճել են: «Հանքահումքային արտադրանքի» արտահանման տ/տ նվազումը 2009թ. առաջին եռամսյակում կազմել է 55.8% (բացասական ազդեցությունը՝ 6.8 տոկոսային կետ): «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման տ/տ նվազումը հաշվետու եռամսյակում կազմել է 47.8% (բացասական ազդեցությունը՝ 18.0 տոկոսային կետ):

«Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման տ/տ նվազումը առաջին եռամսյակում կազմել է 33.7%: Այդ թվում՝ ադամանդի արտահանման նվազումը կազմել է 54.8%: Ապրանքախմբում ներառված ոսկու արտահանման ծավալներն ավելացել են 74.8%-ով և կազմել 10.4 մլն ԱՄՆ դոլար:

«Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման նշանակալի նվազումը՝ տ/տ 50.9%, հիմնականում պայմանավորվել է Ռուսաստան կոնյակի արտահանման ծավալների նվազմամբ:

«Մանածագործական իրեր» ապրանքախմբի արտահանման նվազումը կազմել է տ/տ 57.7%, իսկ «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբինը՝ տ/տ 57.5%: Նշված ապրանքախմբերի ընդհանուր կշիռը 2009թ. առաջին եռամսյակի արտահանման մեջ կազմել է 7.7%:

Համաշխարհային շուկաներում գնանկումային միջավայրը, ներքին պահանջարկի նվազման հետ մեկտեղ, արտահայտվել է ներմուծման իրական և դոլարային ծավալների նվազմամբ: Եթե նախկին եռամսյակում մի շարք ապրանքախմբերի ներմուծման ծավալների աճը դեռևս պահպանվել էր, ապա հաշվետու եռամսյակում արձանագրվել է գրեթե բոլոր ապրանքախմբերի ներմուծման նվազում<sup>24</sup>:

Մասնավորապես՝ «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» և «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր»<sup>25</sup> ապրանքախմբերի ներմուծման ծավալների համապատասխանաբար տ/տ 36.7% և 70.9% նվազում է արձանագրվել: Մնացած մեծ կշիռ կազմող ապրանքախմբերի՝ «Պատրաստի սննդի արտադրանք», «Հանքահումքային արտադրանք», «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ներմուծման<sup>26</sup> նվազումը առաջին եռամսյակում կազմել է համապատասխանաբար 2.9%, 21.7%, 29.2%:

«Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբի ներմուծման նվազումը կազմել է տ/տ 29.1%:

<sup>23</sup> *Բավականին փոքր կշիռ ունեցող երեք ապրանքախմբերի արտահանման ծավալները ավելացել են:*

<sup>24</sup> *«Կենդանի կենդանիներ և կենդանական ծագման արտադրանք», «Քուսական ծագման արտադրանք» և փոքր կշիռ ունեցող 5 այլ ապրանքախմբերի ներմուծման աճը պահպանվել է:*

<sup>25</sup> *Այդ թվում՝ ադամանդի ներմուծումը նվազել է 62.8%-ով, իսկ ոսկու ներմուծումը՝ 77.7%-ով:*


<sup>26</sup> *«Պատրաստի սննդի արտադրանքի» նպաստումը ներմուծման նվազմանը կազմել է 0.2 տոկոսային կետ, «Հանքահումքային արտադրանքի» նպաստումը՝ 3.8 տոկոսային կետ, «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբի նպաստումը՝ 3.9 տոկոսային կետ, «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբի նպաստումը՝ 4.2 տոկոսային կետ:*

«Քիմիա և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք», «Պլաստմասսա և դրանից իրեր» ապրանքախմբերի ներմուծումը նվազել է համապատասխանաբար տ/տ 8.3%-ով և 29.6%-ով:


Առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի՝ արտահանման նվազումը կազմել է 49.8%, իսկ ներմուծման նվազումը՝ տ/տ 18.1%: Առևտրային հաշվեկշռի պակասուրդը, առանց այս հոդվածի ցուցանիշը հաշվի առնելու, նվազել է և կազմել 540 մլն ԱՄՆ դոլար (արտահանումը հաշվարկված է ՖՕԲ գներով, ներմուծումը՝ ՍԻՖ գներով):

Առևտրային հաշվեկշռի պակասուրդի նվազումը պայմանավորվել է երկրների բոլոր խմբերի հետ առևտրային հաշվեկշիռների պակասուրդների նվազմամբ: Այդ թվում՝ Եվրոմիության երկրների հետ առևտրային հաշվեկշռի պակասուրդը նվազել է 30.6 մլն ԱՄՆ դոլարով (կամ 20.6%-ով), իսկ ԱՊՀ երկրների հետ՝ 20.2 մլն ԱՄՆ դոլարով (կամ 9.2%-ով): Մնացած երկրների շարքում առանձնացվում են Թուրքիան, Իրանը և Ճապոնիան, որոնց հետ առևտրային հաշվեկշռի պակասուրդը կրճատվել է համապատասխանաբար 6.9 մլն ԱՄՆ դոլարով (19.7%-ով), 6.4 մլն ԱՄՆ դոլարով (26.8%-ով) և 14.3 մլն ԱՄՆ դոլարով (41.0%-ով): Չինաստանի հետ առևտրային հաշվեկշռի պակասուրդը գրեթե պահպանվել է նույն մակարդակի վրա:

2009 թ. 1-ին եռամսյակում արտահանվող հիմնական ապրանքախմբերի ծավալները բավականաչափ նվազել են (մլն ԱՄՆ դոլար)



2009 թ. 1-ին եռամսյակում ներմուծվող հիմնական ապրանքախմբերի ծավալները նվազել են (մլն ԱՄՆ դոլար)



Ծառայությունների հաշվեկշռի պակասուրդը 2009թ. առաջին եռամսյակում նվազել է 5.1%-ով և կազմել 56.6 մլն ԱՄՆ դոլար՝ հիմնականում պայմանավորված տրանսպորտային ծառայությունների հաշվեկշռի պակասուրդի նվազմամբ, ինչը կրել է արտահանման նվազման նկատմամբ ներմուծման դոլարային ծավալների առաջանցիկ նվազման ազդեցությունը: Ծառայությունների արտահանման նվազումը կազմել է տ/տ 17.6% (ծառայությունների ներմուծման նվազումը՝ տ/տ 13.3%):

Ֆիզիկական անձանց դրամական փոխանցումների<sup>27</sup> առումով նշանակալի ազդեցություն է ունեցել Ռուսաստանի տնտեսության անբարենպաստ զարգացումների խորացումը: Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի խորացման հետևանքով 2009թ. առաջին եռամսյակում արդեն արձանագրվել է տնտեսական անկում, որի պայմաններում զգալի նվազել է մասնավոր տրանսֆերտների և սեզոնային աշխատողների եկամուտների ներհոսքը: Սեզոնային աշխատողների աշխատուժից եկամուտների զուտ ներհոսքը կազմել է 80.8 մլն ԱՄՆ դոլար (տ/տ նվազումը կազմել է 34.0%), ինչը փոխհատուցել է «Եկամուտներ ներդրումներից» հոդվածով 80.9 մլն ԱՄՆ դոլար զուտ արտահոսքի ծավալները: Արդյունքում՝ «Եկամուտներ» հոդվածով զուտ ներհոսքը գրեթե զրոյական է եղել (նախորդ տարվա նույն եռամսյակում արձանագրվել էր 41.2 մլն ԱՄՆ դոլարի զուտ ներհոսք): Մասնավոր տրանսֆերտների նվազումը նույնպես բարձր է եղել և կազմել է տ/տ 33.2%:

մլն ԱՄՆ դոլար

Ցուցանիշներ	2006/1	2007/1	2008/1	2009/1
	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Գնահատական
Ընթացիկ հաշիվ	-59.8	-191.2	-303.9	-361.6
Առևտրային հաշվեկշիռ	-176.0	-314.2	-474.1	-438.6
Ծառայություններ (զուտ)	-30.2	-35.0	-59.6	-56.6
Եկամուտներ (զուտ)	64.0	6.4	41.2	-0.1
Մասնավոր տրանսֆերտներ (զուտ)	73.0	134.8	173.8	116.1
Պաշտոնական տրանսֆերտներ (զուտ)	9.4	16.8	14.8	17.6

**Կապիտալի և ֆինանսական հաշիվ**

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի դրսևորումներից էին մասնավոր հատվածի վարքագծի կտրուկ փոփոխությունները՝ կապված դոլարայնացման գործընթացի հետ, ինչը դրսևորվել էր դեռևս նախորդ եռամսյակի ընթացքում: Այդ վարքագծի արդյունքում մասնավոր հատվածի կողմից (առանց բանկերի) կապիտալի նշանակալի արտահոսքը պահպանվել է հաշվետու եռամսյակում ևս: Մյուս հոդվածներով կապիտալի զուտ ներհոսքը պահպանվել է, ինչը փոքր-ինչ գերազանցել է մասնավոր հատվածի կապիտալի արտահոսքի մեծ ծավալները: Նշված հոսքերի արդյունքում կապիտալի և ֆինանսական հաշվով միջոցների զուտ ներհոսքի գրեթե զրոյական մակարդակը ընթացիկ հաշվի պակասուրդի մեծ ծավալների պայմաններում հանգեցրել է ՀՀ կենտրոնական բանկի զուտ արտաքին ակտիվների 362.2 մլն ԱՄՆ դոլարով նվազման (նախորդ տարվա նույն եռամսյակում ԿԲ զուտ արտաքին ակտիվների նվազումը կազմել է 86.6 մլն ԱՄՆ դոլար): 2009 թ. 1-ին եռամսյակում ՀՀ Կառավարության, ՀՀ ԿԲ-ի և ԱՄՀ-ի միջև վճարային հաշվեկշռի կարգավորման և ԿԲ արտարժույթային պահուստների համալրման նպատակով կնքվել է «Stand-by» համաձայնագիրը, որի շրջանակներում, 1-ին եռամսյակում ստացվել է 161.6 մլն ՀՓԻ:


Կապիտալ տրանսֆերտների ներհոսքի ծավալներն առաջին եռամսյակում կազմել են 16.0 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարվա նույն եռամսյակում՝ 27.8 մլն ԱՄՆ դոլար):

<sup>27</sup> 2009թ. առաջին եռամսյակում արձանագրվել է բանկային համակարգի միջոցով իրականացվող ոչ առևտրային բնույթի զուտ փոխանցումների տ/տ 32.1% նվազում: Ընդ որում՝ ոչ առևտրային բնույթի փոխանցումների ներհոսքը կրճատվել է տ/տ 30.8%-ով, իսկ արտահոսքը՝ տ/տ 25.8%-ով:

Օտարերկրյա ուղղակի ներդրումները պահպանել են նշանակալի դերակատարումը կապիտալի ներհոսքի ծավալներում: Այսպես՝ 2009թ. առաջին եռամսյակում օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ ներհոսքը կազմել է 125.4 մլն ԱՄՆ դոլար՝ արձանագրելով ցածր՝ տ/տ 7.6% աճ:

«Այլ ներդրումներ»<sup>28</sup> հողվածով տեղի է ունեցել 178.5 մլն ԱՄՆ դոլարի զուտ արտահոսք (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 37.7 մլն ԱՄՆ դոլարի զուտ ներհոսք): Ընդ որում՝ առևտրային բանկերի զուտ արտաքին ակտիվների նվազումը կազմել է 41.2 մլն ԱՄՆ դոլար՝ այլ մասնավոր հատվածի զուտ արտաքին ակտիվների բավականին բարձր աճի (219.7 մլն ԱՄՆ դոլարով) պայմաններում:

2009 թ. 1-ին եռամսյակում ընթացիկ հաշվի պակասուրդն ավելացել է կապիտալի և ֆինանսական հաշվով միջոցների զուտ ներհոսքի գրեթե զրոյական մակարդակի պայմաններում:



### 3.3. ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ, ՓՈՒՆԱՐԺԵՔ ԵՎ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ


#### 3.3.1. Տոկոսադրույքներ

2009 թվականի առաջին եռամսյակի ընթացքում համաշխարհային տնտեսական ճգնաժամի պայմաններում միջազգային շուկաներում պահպանվող գնանկումային միջավայրը և ներքին պահանջարկի աճի տեմպերի դանդաղումը նպաստել են ցածր գնաճի ձևավորմանը: Այս իրավիճակում ՀՀ ԿԲ-ն հետանուտ է եղել դրամավարկային պայմանների թուլացման քաղաքականությանը: Այսպես, ԿԲ խրոհուրդը հունվարին և փետրվարին ռեպո տոկոսադրույքը նվազեցրել է 0.25-ական տոկոսային կետերով՝ սահմանելով համապատասխանաբար 7.00% և 6.75%: Սակայն, հաշվի առնելով մարտի սկզբին ՀՀ դրամի արժեզրկման հետևանքով առաջացող գնաճային ճնշումները, մարտին ռեպո տոկոսադրույքը բարձրացրել է 1 տոկոսային կետով՝ սահմանելով 7.75%: Միաժամանակ, պահպանելով մշտական հնարավորության գործիքների տոկոսադրույքները ռեպո գործառնության տոկոսադրույքից հավասարաչափ հեռացված լինելու դրույթը, դրանք հունվար-փետրվար ամիսներին իջեցվել են 0.25-ական տոկոսային կետերով, իսկ մարտին բարձրացվել 1 տոկոսային կետով:


2009 թ. առաջին եռամսյակում ԿԲ-ն շարունակել է յուրաքանչյուր չորեքշաբթի առաջարկել ռեպո համաձայնագրերի կնքում, որի արդյունքում առևտրային բանկերը մշտապես կարողացել են հարթել իրենց իրացվելիության խնդիրները: 2009 թ. առաջին եռամսյակում իրականացված ռեպո գործառնությունների միջին շաբաթական ծավալը կազմել է 56.688 մլրդ դրամ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 9.758 մլրդ դրամ):

<sup>28</sup> Բանկային համակարգի և այլ մասնավոր հատվածի զուտ արտաքին ակտիվները:

**ԿԲ գործառնությունների և շուկայական ռեպոյի տոկոսադրույթներ**



**Առաջին եռամսյակի ընթացքում ԿԲ կողմից իրականացված ռեպո գործառնությունների ծավալը (մլն ՀՀ դրամ)**



Առաջին եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի կողմից Կենտրոնական բանկում ներդրված ավանդի միջին օրական ծավալը կազմել է 1.846 մլրդ դրամ (նախորդ տարի՝ 4.834 մլրդ դրամ):

2009 թ. առաջին եռամսյակի ընթացքում ռեպո շուկայում իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 39.7 մլրդ դրամ. նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է ավելի քան 3 անգամ: Շուկայական ռեպո տոկոսադրույթը մարտին կազմել է 8.9% (2008թ. մարտին՝ 6.63%): Առևտրային բանկերի միջև իրականացված գործառնությունների տեսակարար կշիռն ընդհանուր ծավալում 2009թ. առաջին եռամսյակում կազմել է մոտ 12% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 50%):


ՀՀ պետական (զանձապետական) կարծաժամկետ պարտատոմսերի թողարկման ծավալները եռամսյակի ընթացքում կազմել են 16.5 մլրդ դրամ: Տեղաբաշխված ՊԿՊ ընդհանուր ծավալը 2009թ. առաջին եռամսյակում կազմել է 11.9 մլրդ դրամ (նախորդ տարվա առաջին եռամսյակում՝ 1.2 մլրդ դրամ):

Պետական (զանձապետական) պարտատոմսերի առաջնային շուկայում ևս տոկոսադրույթները բարձրացել են: 2009թ. առաջին եռամսյակի ընթացքում տեղաբաշխված կարծաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի միջին եկամտաբերությունները կազմել են 9.86%, 10.48 % և 12.88%՝ նախորդ տարվա համեմատ աճելով համապատասխանաբար 2.97, 2.37 և 2.44 տոկոսային կետով:

Ինչպես ցույց է տալիս եկամտաբերության կորերի ուսումնասիրությունը, ՊՊ երկրորդային շուկայում եկամտաբերություններն աճել են կորի կարծաժամկետ և երկարաժամկետ հատվածներում: Եկամտաբերության կորի դիրքի փոփոխության գերակշիռ մասը՝ 88.42%-ը, պայմանավորված է կորի մակարդակի համընթաց (զուգահեռ) տեղաշարժով, որը կազմել է 0.68 տոկոսային կետ՝ ի հաշիվ


Եկամտաբերությունների աճի: 17.67%-ով փոփոխվել է կորի գոգվածությունը (0.193-ից՝ 0.159), ինչը վկայում է երկարաժամկետ ու կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքների միջև տարբերության նվազման մասին: Մնացորդային գործոնները կորի փոփոխության մեջ կազմել են -6.29%:

*Երկրորդային շուկայում ավելացել են կարճաժամկետ և երկարաժամկետ տոկոսադրույքները*




ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով վարկերի ու ավանդների տոկոսադրույքները դրսևորել են աճի միտումներ: 2009թ. մարտին ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով ներգրավված ավանդների տոկոսադրույքները կազմել են համապատասխանաբար 10.4% և 7.7%՝ նախորդ տարվա մարտի համեմատ աճելով 4 և 2.3 տոկոսային կետով: Արդյունքում՝ ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով ավանդների տոկոսադրույքների տարբերությունը կազմել է 2.7 տոկոսային կետ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1-ի փոխարեն:

*Բանկային համակարգում ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով ավանդների տոկոսադրույքներն աճել են*



ՀՀ դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները 2009թ. մարտին կազմել են 18.2%, իսկ ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերինը՝ 15.3%՝ նախորդ տարվա մարտի համեմատ աճելով համապատասխանաբար 0.5 և 1.7 տոկոսային կետով: Արդյունքում՝ 2009թ. մարտին ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով վարկերի տոկոսադրույքների տարբերությունը կազմել է 2.9 տոկոսային կետ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 4.1-ի փոխարեն:

*Բանկային համակարգում ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով վարկերի տոկոսադրույքներն աճել են*




2009 թ. մարտին 77 դրամով վարկերի ու ավանդների տոկոսադրույքների տարբերությունը կազմել է 7.8 տոկոսային կետ (2008թ. մարտին՝ 11.3)՝ նվազելով 3.5 տոկոսային կետով, իսկ ԱՄՆ դոլարով վարկերի ու ավանդների տոկոսադրույքների տարբերությունը՝ 7.6 տոկոսային կետ (2008թ. մարտին՝ 8.2)՝ նվազելով 0.6 տոկոսային կետով:

### 3.3.2. Փոխարժեք

Համաշխարհային ճգնաժամի խորացումը առաջին եռամսյակում ազդեցություն է ունեցել նաև փոխարժեքի զարգացումների վրա: Ազգային արժույթի արժեզրկման սպասումների արդյունքում ձևավորվել են բանկային համակարգից խնայողությունների արտահոսքի և դրամային ավանդների՝ դոլարայինով փոխարինման ճնշումներ: Այս ամենը հանգեցրել է բանկային համակարգի՝ իրացվելիության և կապիտալի բավարարության հետ կապված ռիսկերի: Դրանք չեզոքացնելու նպատակով ԿԲ-ն տարեսկզբից ակտիվացրել է միջամտությունն արտարժույթի շուկայում՝ փոխարժեքի ժամանակավոր կայունացման միջոցով բանկային համակարգին հնարավորություն ընձեռելով վերակառուցելու հաշվեկշիռը: Մարտի սկզբին, երբ ֆինանսական համակարգը արդեն բավարար կապիտալացված էր, իրացվելի և պատրաստ դիմակայելու ճգնաժամի հետագա մարտահրավերներին, ԿԲ-ն դադարեցրել է ժամանակավոր միջամտությունն արտարժույթի շուկայում՝ վերադառնալով լողացող փոխարժեքի քաղաքականությանը: Արդյունքում՝ ազգային արժույթի փոխարժեքը ճշգրտվել է արժեզրկման ուղղությամբ, երբ դրամի արժեզրկումը 2009թ. առաջին եռամսյակում կազմել է տ/տ 16.6%՝ 306.7 դրամից հասնելով 367.8 դրամի:


Առաջին եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, դրամի միջին եռամսյակային փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 5.38%-ով. 308.05 դրամից՝ 325.56 դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում տեղի էր ունեցել արժևորում 16.68%:

ԱՄՆ դոլարի նկատմամբ 77 դրամի փոխարժեքի շարժը



Եռամսյակի ընթացքում միջբանկային շուկայում իրականացված գործառնությունների համախառն ծավալը կազմել է 2,818.9 մլն ԱՄՆ դոլար<sup>29</sup>՝ 32.33%-ով ավելի նախորդ տարվա առաջի եռամսյակի գործառնությունների ծավալից (2130.2 մլն ԱՄՆ դոլար):

Արժույթային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները



<sup>29</sup> Ներառված են նաև բորսայում իրականացված առք ու վաճառքի ծավալները՝ 523.055 մլն ԱՄՆ դոլար:


Եվրո/դրամ գործառնությունների շուկայում նույնպես ծավալները ավելացել են: Համախառն ծավալը կազմել է 334.37 մլն եվրո՝ նախորդ տարվա առաջի եռամսյակի համեմատ 121.72%-ով ավելի:

Դրամի առաջարկը կարգավորելու և դրամի փոխարժեքի տատանումները մեղմելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը առաջին եռամսյակում ՀՀ բանկերից գնել է 6.67 մլն, վաճառել՝ 442.46 մլն ԱՄՆ դոլար:

ՀՀ ազգային արժույթի լողացող փոխարժեքի քաղաքականության իրականացման արդյունքում ՀՀ դրամը եռամսյակի վերջում, նախորդ տարվա վերջի համեմատ, արժեզրկվել է 16.59%-ով՝ 306.73 դրամից հասնելով 367.77 դրամի, իսկ 2009թ. մարտին, նախորդ տարվա մարտի համեմատ, արժեզրկվել է 18.5 տոկոսով. 308.6 դրամից՝ 365.7 դրամի: Չնայած անվանական փոխարժեքի արժեզրկմանը՝ 2009 թվականի առաջին եռամսյակում ՀՀ դրամի անվանական արդյունավետ փոխարժեքը շարունակել է արժևորվել, որը միջինում կազմել է տ/տ 14.9% (նախորդ եռամսյակի ցուցանիշից 2.5 տոկոսային կետով բարձր): Անվանական արդյունավետ փոխարժեքի տ/տ արժևորման այդ տեմպերը գրանցվել են հիմնականում ի հաշիվ գործընկեր երկրների արժույթների՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ միջին կշռված արժեզրկման՝ 20.6% (նախորդ եռամսյակում՝ 8.7%): Գործընկեր երկրների փոխարժեքներից ամենամեծ նպաստումը ունեցել է ռուսական ռուբլին (առաջին եռամսյակում՝ 7.7 տոկոսային կետ), ինչպես նաև եվրոն (տ/տ 5.4 տոկոսային կետ): Անվանական արդյունավետ փոխարժեքը 2009թ. մարտին, նախորդ տարվա մարտի համեմատ, արժևորվել է 5.6 տոկոսով:

Անվանական արդյունավետ փոխարժեքի արժևորման տեմպերի նվազումը հանգեցնում է նաև իրական փոխարժեքի նույնանման վարքագծին: Եվ Հայաստանում, և՛ գործընկեր երկրներում գնաճը էականորեն թուլացել է, որի դեպքում Հայաստանում միջին եռամսյակային գնաճը տ/տ կազմել է 2.1%, իսկ գործընկեր երկրների միջին կշռված գնաճը՝ տ/տ 5.6%: Գործընկեր երկրների միջին կշռված գնաճի վրա մեծ է եղել հատկապես Ռուսաստանի և Ուկրաինայի գնաճի նպաստումը՝ համապատասխանաբար 2.5 և 1.5-ական տոկոսային կետ, չնայած փոքր չէր նաև Իրանի գնաճի ազդեցությունը՝ 0.9%: Արդյունքում՝ իրական փոխարժեքը 2009 թվականի առաջին եռամսյակում արժևորվել է տ/տ 10.7%-ով (նախորդ եռամսյակում՝ 11.5%-ով), իսկ 2009թ. մարտին, նախորդ տարվա մարտի համեմատ, իրական արդյունավետ փոխարժեքի արժևորումը կազմել է 0.5 տոկոսային կետ:

**2009 թ. առաջին եռամսյակում շարունակվել է իրական և անվանական փոխարժեքների արժևորումը**




2009 թվականի առաջին եռամսյակում ներքին իրական փոխարժեքը արժևորվել է տ/տ 7.6%-ով (նախորդ եռամսյակում՝ 5.2%), որը ոչ արտահանելի հատվածի գների նկատմամբ արտահանելի հատվածի գների գերազանցող աճի հետևանք է:

Ոչ արտահանելի ապրանքների և ծառայությունների գները առաջին եռամսյակում տ/տ աճել են 10.2%-ով, մինչդեռ արտահանելի ապրանքների գները՝ միայն 2.4%-ով (նախորդ եռամսյակում՝ համապատասխանաբար 13.1 և 7.6%): Առաջին եռամսյակում արտահանելի ապրանքների գները փոքր-ինչ նվազել են՝

արձագանքելով միջազգային գների ցածր մակարդակին: Նվազել են նաև ոչ արտահանելի հատվածի գները, ինչի պատճառը, թերևս, տնտեսական ճգնաժամի խորացումը և համախառն ներքին և արտաքին եկամուտների նվազումն է:

**Առաջին եռամսյակում ներքին իրական փոխարժեքը շարունակել է արժևորվել**




**3.3.3. Դրամավարկային զարգացումներ<sup>30</sup>**

Համաշխարհային ճգնաժամի խորացումը էական ազդեցություն է ունեցել 2009 թվականի առաջին եռամսյակի դրամավարկային հատվածի զարգացումների վրա: Ինչպես և սպասվում էր, դրամավարկային միջավայրը բնութագրվել է տնտեսության դադարաշրջանի մակարդակի աճով, ինչն արտահայտվել է փողի ազդեցատների դրամային բաղադրատարրերի էական նվազմամբ: Փաստացի արդյունքներով՝ տ/տ 33.7%-ով նվազել է դրամային զանգվածը, ինչը պայմանավորվել է դրամային ավանդների և շրջանառության մեջ գտնվող կանխիկ համապատասխանաբար 38.7% և 29.8% նվազումներով: Համեմատության համար նշենք, որ 2008 թ. վերը թվարկված ցուցանիշների աճ է արձանագրվել՝ համապատասխանաբար տ/տ 55.8%, 63.9% և 50%:

Շրջանառության մեջ եղած կանխիկ կրճատմանը նպաստել են նաև ԿԲ կողմից իրականացված արտարժույթի զուտ վաճառքի գործառնությունները: Դրանք, առաջին հերթին, նպատակաուղղված էին խորացող համաշխարհային ճգնաժամի պայմաններում ֆինանսական կայունության պահպանմանը, մասնավորապես՝ ազգային արժույթի արժեզրկման ճնշումների, բանկային համակարգից խնայողությունների արտահոսքի և դրամային ավանդները դադարաշրջանի փոխարինելու հետևանքով բանկային համակարգում առաջացած իրացվելիության ու կապիտալի բավարարության հետ կապված ռիսկերի չեզոքացմանը:

**Փողի զանգվածի կառուցվածքում դրամայնացման գործընթացի դանդաղումն արտահայտվել է դրամային բաղադրատարրերի նվազումներով**




Վերոնշյալ երևույթն արտացոլվել է նաև դրամային արտահայտության արտարժույթային ավանդների տարեկան վարքագծում. գրեթե 2 անգամ կամ 139.8 մլրդ դրամով աճ, այն դեպքում, երբ նախորդ տարվա առաջին եռամսյա-

<sup>30</sup> Երրորդ եռամսյակից սկսած՝ «ՀՀ ԴՎԲ ծրագիր, Գնաճի հաշվետվություն» պարբերականում կտրվեն ավանդային կազմակերպությունների՝ ԿԲ-ի, առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ամփոփ հաշվեկշռային ցուցանիշները:

կում նույն ցուցանիշը աճել էր ընդամենը 3.5%-ով (պայմանավորված դոլարի տ/տ արժևորմամբ): Այս ցուցանիշի աճը, դոլարային արտահայտությամբ, 2009թ. առաջին եռամսյակում նույնպես զգալի բարձր է եղել նախորդ տարվա ցուցանիշից՝ տ/տ 66.7%՝ 22%-ի փոխարեն:

Ավանդների ժամկետային կառուցվածքում արձանագրվել է միայն արտարժույթով ժամկետային և ցպահանջ ավանդների աճ՝ համապատասխանաբար 2.5 անգամ կամ 120.9 մլրդ դրամ և 31.9% (դոլարային արտահայտությամբ աճը համապատասխանաբար կազմել է 2.1 անգամ կամ 285.3 մլն ԱՄՆ դոլար և 10.2%): Դրամով ժամկետային և ցպահանջ ավանդները համապատասխանաբար նվազել են 51%-ով և 26.4%-ով:

**Դրամով և արտարժույթով ավանդները ըստ ժամկետայնության**



Փողի զանգվածը բաղադրատարրերի վերոնշյալ շարժերի արդյունքում նվազել է տ/տ 6.2%-ով:


Ըստ առաջարկի գործոնների՝ փողի ազդեցատների նվազումը ամբողջությամբ պայմանավորվել է ավանդային կազմակերպությունների ՁԱԱ-ի<sup>31</sup> կրճատման հաշվին, որի նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 67.1%, իսկ ՁՆԱ-ն այդ ժամանակահատվածում աճել է 46.5%-ով: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարի այդ ցուցանիշները համապատասխանաբար աճել էին 1.7%-ով և 2.1 անգամ: Այս միտումները հիմնականում պայմանավորվել են առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ՁԱԱ-ի և ՁՆԱ-ի վարքագծերով, ընդ որում՝ ՁՆԱ աճի հիմնական պատճառը Կառավարության զուտ պարտավորությունների և արտաքին փոխառությունների հաշվին տնտեսությանը տրամադրված վարկերի աճն է:

Պայմանների խստացման պատճառով որոշակի դանդաղել են տնտեսության վարկավորման աճի տեմպերը՝ տ/տ 36.3%-ով կամ 191.2 մլրդ դրամով (2008-ին՝ 79.7% կամ 233.4 մլրդ դրամ): Մարտի սկզբին դրամի փոխարժեքի կտրուկ արժեզրկումը բացառելու դեպքում ունենում ենք վարկավորման ավելի փոքր աճ՝ տ/տ 25.3% կամ 131.6 մլրդ դրամ: Ընդ որում, տնտեսության վարկավորման ցուցանիշի վարքագիծը ևս արտացոլել է դոլարայնացման գործընթացի ազդեցությունը, քանի որ դրամով վարկավորումն այդ ժամանակահատվածում ավելացել է 16.2%-ով կամ 51.7 մլրդ դրամով, այն դեպքում, երբ դրամային արտահայտությամբ արտարժույթով վարկերն ավելացել են 66.9%-ով կամ 135.5 մլրդ դրամով (դոլարային արտահայտությամբ աճը կազմել է 39.4%): Արդյունքում, վարկավորման ընդհանուր ծավալում դրամ/արտարժույթով տրամադրված միջոցների համամասնությունը կազմել է 52/48՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 61/39-ի փոխարեն:

2009 թվականի առաջին եռամսյակում տնտեսության դոլարայնացման աստիճանը (արտարժույթային ավանդներ/փողի զանգված) շարունակել է աճել՝ կազմելով տ/տ 43.9%, ինչն ավելի քան երկու անգամ գերազանցել է նախորդ տարվա նույն ցուցանիշը:


<sup>31</sup> ՁԱԱ նվազումը այդ ժամանակահատվածում նաև պայմանավորվել է դրամի նկատմամբ այլ արտարժույթների տարբեր ծրագրային փոխարժեքներով:

Թեև դիտվել է տնտեսության ընդհանուր վարկավորման աճ, այդուհանդերձ, 2009 թ. փետրվարից, 77 դրամով վարկերի աճի տեմպերը զիջել են արտարժույթով վարկերի աճի տեմպերին




Ֆինանսական միջնորդությունը բնութագրող տնտեսության փողայնացման և դրամայնացման գործակիցները առաջին եռամսյակում շարունակել են նվազել՝ համապատասխանաբար տ/տ 16.9%-ով և 41.2%-ով (վերջին ցուցանիշն առավել բարձր է՝ պայմանավորված այդ ժամանակահատվածում դրամի նկատմամբ փոքրածավալ պահանջարկի դրսևորմամբ):

2009 թ. առաջին եռամսյակում տնտեսության դրամայնացման գործընթացը դանդաղել է



Դրամային ֆինանսական միջնորդության մակարդակի նվազման մասին է վկայում ժամանակահատվածի վերջի դրությամբ դրամային բազմարկիչի<sup>32</sup> տարեկան 15.1%-ով նվազումը, որի ազդեցության հիմնական գործոնը շրջանառությունում եղած կանխիկի համեմատ դրամային ավանդների ավելի բարձր նվազման տեմպի պահպանումն է: Պայմանավորված արտարժույթային ավանդների համեմատաբար մեծ աճով՝ փողի բազմարկիչը նվազել է ավելի քիչ՝ տարեկան 8.8%-ով:

Փողի և դրամային բազմարկիչների վարքագիծը




Միջնորդության մակարդակը բնութագրող վերոնշյալ ցուցանիշների վարքագիծը վկայում է, որ հիմնականում վերջին երկու եռամսյակներում ֆինանսական և հատկապես դրամային միջնորդության աստիճանը որոշակի նվազել է:

<sup>32</sup> Դրամային բազմարկիչը հաշվարկվում է որպես դրամային զանգվածի և փողի բազայի դրամային բաղադրատարրերի հարաբերություն:

**Փողի բազա**


Տարեսկզբից շարունակվող դրամայնացման տեմպերի դանդաղման պարագայում ԿԲ-ն փողի առաջարկն ապահովել է դրամի նկատմամբ տնտեսության ներկայացրած պահանջարկին համահունչ: Արդյունքում, մարտի վերջի դրությամբ փողի բազայի տարեկան աճը կազմել է 2.9 %, որը, ի տարբերություն նախորդ տարիների (հիմնականում արտացոլվել էր ԿԲ-ից դուրս կանխիկի վարքագծում), ամբողջությամբ արտացոլվել է ԿԲ-ում առևտրային բանկերի թղթակցային հաշիվների վարքագծում՝ 2.9 անգամ: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարի այս ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 43.8% և 13.4%:

*Նախորդ տարվա համեմատ, 2009 թ. առաջին եռամսյակում ԿԲ-ից դուրս կանխիկը նվազել է*



Դրամայնացման գործընթացի տեմպերի զգալի դանդաղումն արտահայտվել է շրջանառությունում գտնվող կանխիկի, հետևաբար և ԿԲ-ից դուրս շրջանառվող կանխիկի վարքագծում: ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկ դրամի՝ վերջին տարիների վարքագծերի համադրումից կարելի է փաստել, որ, այս տարվա առաջին եռամսյակում, ի տարբերություն նախորդ տարիների նույն ժամանակահատվածի, ԿԲ-ից դուրս կանխիկը կտրուկ նվազել է:

*Վերջին տարիների համեմատ 2009 թ. առաջին եռամսյակն առանձնացել է ԿԲ-ից դուրս կանխիկի աճի տեմպերի զգալի դանդաղմամբ*



Փողի բազան տարվա ընթացքում ամբողջությամբ ավելացել է ԿԲ ՋՆԱ-ի 100.8 մլրդ դրամ աճի հաշվին, ինչն ուղեկցվել է ԿԲ ՋՆԱ-ի 89.9 մլրդ դրամ նվազմամբ: Առաջին դեպքում աճը հիմնականում պայմանավորվել է ԿԲ հանդեպ բանկերի զուտ պարտավորությունների՝ 44.8 մլրդ դրամ և ԿԲ հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունների՝ 64.3 մլրդ դրամ աճով և ԿԲ արժեթղթերի զուտ 36 մլրդ դրամ նվազմամբ: Երկրորդ ցուցանիշի նվազումը պայմանավորող հիմնական գործոնը արտարժույթային շուկայում արտարժույթի զուտ վաճառքի գործառնություններն են:

**3.4. ՀԱՄԱԽԱՌՆ  
ՊԱՅԱՆՋԱՐԿ ԵՎ  
ԱՌԱՋԱՐԿ**

**3.4.1. Համախառն  
պահանջարկ**

**Ներքին պահանջարկ**

*Մասնավոր սպառում և ներդրումներ*<sup>33</sup>. 2009 թվականի առաջին եռամսյակում համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը մեծապես ազդել է ներքին պահանջարկի՝ հատկապես մասնավոր ծախսումների վրա, որի հիմնական պատճառը մասնավոր հատվածի եկամուտների կրճատումն էր՝ պայմանավորված ինչպես արտաքին ֆինանսական ներհուսքի, այնպես էլ մասնավոր հատվածի աշխատավարձերի կրճատմամբ:

Առաջին եռամսյակի ընթացքում ներքին պահանջարկը իրական արտահայտությամբ նվազել է շուրջ 4.2%-ով՝ նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի 8.0% աճի փոխարեն: Ներքին պահանջարկի նվազումը բացառապես պայմանավորվել է մասնավոր ծախսումների կրճատմամբ, քանի որ պետական հատվածում արձանագրվել է ծախսումների շուրջ 14.1% իրական աճ:


Մասնավոր ծախսումներն իրական արտահայտությամբ նվազել են շուրջ 7.4%-ով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրված 7.9% աճի փոխարեն: Մասնավոր ծախսումների կառուցվածքում նվազում է արձանագրվել ինչպես սպառման, այնպես էլ ներդրումների գծով: Մասնավոր սպառման նվազումը կազմել է 5.4%՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի 4.4% աճի փոխարեն: Նվազումը պայմանավորվել է բնակչության եկամուտների, հատկապես՝ տրանսֆերտների և մասնավոր հատվածում աշխատավարձերի կրճատմամբ:

Մասնավոր ներդրումները կրճատվել են 17.8%-ով՝ նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի 30.9% աճի փոխարեն: Ներդրումների նվազումը հիմնականում համաշխարհային ֆինանսական և տնտեսական ճգնաժամի հետևանքով կապիտալ և ընթացիկ տրանսֆերտների կրճատման, ինչպես նաև մասնավոր հատվածում առկա անորոշությունների և բացասական սպասումների արդյունք է:

Առաջին եռամսյակի ընթացքում մասնավոր հատվածի իրական ծախսումները գնաճի վրա զսպող ազդեցություն են ունեցել: Այսպես, ըստ ՀՀ ԿԲ գնահատումների, մասնավոր իրական ծախսումների գնահատված մակարդակը ցածր է եղել հավասարակշիռ մակարդակից շուրջ 7%-ով: Վերջինս գնանկումային ճնշումներ է առաջացրել սպառողական շուկայում՝ նվազեցնելով գնաճը շուրջ 2.1 տոկոսային կետով:

*Պետական սպառում և ներդրումներ*<sup>34</sup>. Հարկաբյուջետային քաղաքականությունը, ըստ հաշվարկված ազդակների, համախառն պահանջարկի վրա առաջին եռամսյակում ունեցել է փոքր՝ 0.5% ընդլայնող ազդեցություն:

**2009 թ. առաջին եռամսյակի  
հարկաբյուջետային  
ազդակն ունեցել է  
ընդլայնող փոքր  
ազդեցություն**




<sup>33</sup> Մասնավոր սպառման և ներդրումների իրական աճի առաջին եռամսյակի ցուցանիշները ՀՀ ԿԲ գնահատումներն են: Նշված ցուցանիշների փաստացի թվերը 2008 թվականի չորրորդ եռամսյակի դրությամբ են:

<sup>34</sup> Հարկաբյուջետային հատվածի վերլուծությունը կատարվել է 2009թ. առաջին եռամսյակի համախառն քաղաքականության նախնական փաստացի ցուցանիշների հիման վրա, որի դասակարգումն իրականացվում է «Կառավարության ֆինանսների վիճակագրություն-2001» ձեռնարկի դասակարգմանը համապատասխան: Ազդակների հաշվարկներում նույնպես օգտագործվել են համախառն քաղաքականության առաջին եռամսյակի նախնական ցուցանիշները, իսկ հաշվարկները կատարվել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ համադրելի վիճակագրական բազայի վրա:

Նախորդ տարվա վերջին և 2009 թ. առաջին եռամսյակում արձանագրված ՀՀ տնտեսության ակտիվության անկումը՝ պայմանավորված համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությամբ, իր անդրադարձն ունեցավ տարվա առաջին եռամսյակի պետական բյուջեի՝ հատկապես եկամուտների մակարդակի վրա: Եռամսյակի արդյունքում ՀՀ բյուջեի եկամուտների գծով արձանագրված ցուցանիշը զգալիորեն ցածր էր ինչպես ՀՀ Կառավարության կողմից սահմանված եռամսյակային համամասնություններում, այնպես էլ եռամսյակի համար ԿԲ կողմից արված կանխատեսումներում ներառված եկամուտների մակարդակից: Ընդհանուր առմամբ, պետական բյուջեի եկամուտները նախորդ տարվա առաջին եռամսյակի նկատմամբ նվազել են և, բացի այդ, 42.8 մլրդ դրամով ցածր են եղել եռամսյակի համար նախատեսված ցուցանիշից: Միևնույն ժամանակ, եռամսյակի արդյունքում ՀՆԱ-ի կանխատեսվածից ավելի ցածր մակարդակի ձևավորման պայմաններում, որոշ չափով մեղմվել է եկամուտների ազդակի ընդլայնող ազդեցությունը, և եկամուտները ամբողջական պահանջարկի վրա ունեցել են 2.6% ընդլայնող ազդեցություն:

Ծախսերի գծով առաջին եռամսյակում գրանցվել է 2.1%<sup>35</sup> զսպող ազդակ: Եռամսյակի ընթացքում պետական ծախսերը, պայմանավորված եկամուտների թերիավաքագրումներով, 42 մլրդ դրամով պակաս են եղել առաջին եռամսյակի համար նախատեսված ցուցանիշից: Միևնույն ժամանակ, նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ գրանցվել է ծախսերի աճ՝ մոտ 12 %-ով: Ընթացիկ ծախսերն ավելացել են 9.3%-ով, իսկ կապիտալ ծախսերը՝ 35%-ով: Ընթացիկ ծախսերի աճ է արձանագրվել գրեթե բոլոր հոդվածներով. մասնավորապես՝ պետական սպառումը տ/տ աճել է մոտ 9.0%-ով, իսկ տրանսֆերտները՝ տ/տ 10%-ով: Ընդհանուր առմամբ, վերը նշված ծախսերի աճը համահունչ է Կառավարության՝ տնտեսական ակտիվության անկման մեղմացմանն ուղղված հակաճգնաժամային ծրագրերին: Առաջին եռամսյակի պետական բյուջեի ծախսերը կազմել են տարեկան ծրագրվածի 17.2 %-ը:

**Համախմբված բյուջեի ծախսերի մեջ 2009 թվականի առաջին եռամսյակում արձանագրվել է միայն լրահատկացումների նվազում**



Եռամսյակի ընթացքում պահպանվել է ներքին աղբյուրների հաշվին կատարվող կապիտալ ծախսերի մեծ տեսակարար կշռի՝ վերջին տարիներին արձանագրված միտումը: Կապիտալ ծախսերի մոտ 60%-ն իրականացվել է ներքին, իսկ 40%-ը՝ արտաքին աղբյուրների հաշվին:


Առաջին եռամսյակում պետական բյուջեի եկամուտները տ/տ նվազել են 12%-ով, ընդ որում՝ հարկային եկամուտները նվազել են 17%-ով, իսկ այլ եկամուտներն աճել 61%-ով. անուղղակի հարկերի նվազումը տ/տ կազմել է 17%, ուղղակի հարկերինը՝ 8%:

Հարկերի կառուցվածքում տ/տ անուղղակի հարկերի կշիռը մնացել է գրեթե անփոփոխ և կազմել հարկային եկամուտների 61.5 %-ը, իսկ ուղղակի հարկերի կշիռը տ/տ աճել է 2.5 տոկոսային կետով և կազմել հարկերի 27.4 %-ը:

<sup>35</sup> Ծախսերի գծով ձևավորված զսպող ազդակը պայմանավորվել է ՀՆԱ-ի զնահատված պոտենցիալ մակարդակով: Ըստ հարկաբյուջետային ազդակների գործող մեթոդաբանության՝ եկամուտների ազդակի հաշվարկում օգտագործվող ՀՆԱ-ն փաստացի անվանական ՀՆԱ-ն է, իսկ ծախսերի ազդակում՝ պոտենցիալ ՀՆԱ-ն:

Եկամուտների և ծախսերի նշված ցուցանիշների պարագայում առաջին եռամսյակում բյուջեի պակասուրդը կազմել է 25.8 մլրդ դրամ կամ ՀՆԱ 5.5 %-ը:

*2009 թվականի առաջին եռամսյակում ավելացել են պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրները*



Ձևավորված պակասուրդի մոտ 113%-ը ֆինանսավորվել է ներքին աղբյուրների հաշվին, իսկ արտաքին աղբյուրներից՝ ներառյալ նաև զուտ արտաքին վարկավորումը, ֆինանսավորումը կազմել է -13%-ը: Արտաքին աղբյուրներում ԾԻԳ-երի գծով փաստացի ֆինանսավորումը կազմել է առաջին եռամսյակի համար նախատեսվածի մոտ 47%-ը: Ներքին աղբյուրների կառուցվածքում գերակշռել է պետական բյուջեի ազատ մնացորդի օգտագործումը, որը նախորդ տարիներին ձևավորված խնայողությունների արդյունք է:

**Ձուտ արտաքին պահանջարկ.** 2009 թ. առաջին եռամսյակում ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալները նվազել են տ/տ 13.9%-ով՝ ապրանքների և ծառայությունների ներմուծման իրական ծավալների տ/տ 10.8% նվազման պայմաններում:

*Սակրոտնտեսական հիմնական ցուցանիշների աճը 2008 և 2009 թվականների առաջին եռամսյակներում՝ իրական արտահայտությամբ*

Ցուցանիշներ	I եռ. 08 / I եռ. 07	I եռ. 09 / I եռ. 08
Իրական ՀՆԱ	9.2	-6.1
Ներքին պահանջարկ	8.0	-4.2
Սպառում	6.1	-3.1
Պետական	16.4	10.9
Մասնավոր	4.4	-5.4
Կապիտալ ներդրումներ	19.0	-10.3
Պետական	-21.6	32.3
Մասնավոր	30.9	-17.8
Արտահանում <sup>36</sup>	-10.1	-13.9
Ներմուծում <sup>36</sup>	0.7	-10.8

### 3.4.2. Համախառն առաջարկ<sup>37</sup>

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանքով համաշխարհային պահանջարկի շարունակական անկումն ու կապիտալ ներհոսքը էական ազդեցություն են ունեցել 2009 թվականի առաջին եռամսյակի տնտեսության ճյուղային զարգացումների վրա: Ընդ որում, արտաքին տնտեսական զարգացումների ազդեցությունը ավելի վառ է դրսևորվել արդյունաբերության և շինարարության ճյուղերում, որտեղ արտադրության ծավալների նվազման հետևանքով առաջին եռամսյակում արձանագրվել է 6.1% տնտեսական անկում:

<sup>36</sup> Վերաբերում է ապրանքների և ծառայությունների արտահանմանն ու ներմուծմանը:

<sup>37</sup> Հատվածում ներկայացվել են տ/տ աճեր, եթե այլ բան նշված չէ:

**Արդյունաբերության** ճյուղում առաջին եռամսյակում արձանագրվել է ավելացված արժեքի 9.7% նվազում՝ հիմնականում պայմանավորված *հանքագործության* և *քիմիական արդյունաբերության* ենթաճյուղերի արտադրության ծավալների նվազմամբ: Մասնավորապես՝ *հանքագործությունում* արտադրության ծավալների իրական նվազումը կազմել է 11.4% ընդ որում՝ եռամսյակի ընթացքում զգալի կրճատվել են *մետաղի հանքաքարերի արդյունահանման* (10.9%) և *շինանյութերի հանքարդյունաբերության* (17.3%) ծավալները: 61.8% անկում է արձանագրվել նաև *քիմիական արդյունաբերությունում*՝ պայմանավորված կաուչուկի արտադրության ծավալների նվազմամբ, ինչպես նաև քիմիական երկու այլ գործարաններում արտադրության ժամանակավոր դադարեցմամբ:

Միևնույն ժամանակ, *սննդի արդյունաբերությունում* թողարկման ծավալները ավելացել են 3.3%-ով: *Սասնթերքի* և *կաթնամթերքի* արտադրությունում տարվա առաջին եռամսյակում պահպանվել են նախորդ տարվա աճի բարձր տեմպերը՝ գերազանցելով 50%-ը, թեև *մսի* և *կաթի* արտադրության ծավալները նվազել են շուրջ 10%-ով (անասնապահության արտադրության ծավալների համանման նվազման հետևանքով): Բացի այդ, զգալի ավելացել են *ալյուրի* (առաջին եռամսյակում՝ 37.6% աճ), *ծավարեղենի* (32.4% աճ), *հրուշակեղենի* (22.3% աճ), *պահածոների* (81% աճ), *կենդանական յուղի* (32.4% աճ), *էթիլային սպիրտի* (3 անգամ աճ) արտադրության ծավալները: Նվազել են *կոնյակի* (36.8% նվազում), *բնական հյութերի* (21% նվազում) և *գարեջրի* (14.3% նվազում) արտադրության ծավալները:

Աճի տեմպերը նվազել են *շինանյութերի արտադրությունում* (առաջին եռամսյակում 25.8% նվազում՝ պայմանավորված շինարարության ծավալների կրճատմամբ) և *էներգետիկայի ենթաճյուղում* (10.6% նվազում՝ պայմանավորված խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների ոչ լրիվ զբաղվածությամբ կամ պարապուրդով):

**Շինարարության** ճյուղում նույնպես զգալի է եղել արտաքին զարգացումների ազդեցությունը, որը դրսևորվել է ինչպես անորոշության էական ավելացմամբ, այնպես էլ կապիտալ ներհոսքի նվազմամբ: Շինարարության ավելացված արժեքը տարվա առաջին եռամսյակում նվազել է 20.5%-ով: Շինարարության ծավալների նվազումը հիմնականում պայմանավորվել է *կազմակերպությունների միջոցների հաշվին* ֆինանսավորվող շինարարության ծավալների կրճատմամբ (եռամսյակի ընթացքում 33.7%-ով), մինչդեռ *բնակչության միջոցներից* ֆինանսավորվող շինարարության ծավալներն ավելացել են 45.1%-ով: Շինարարության ճյուղային կառուցվածքի տեսանկյունից նվազում է արձանագրվել *տրանսպորտի* և *կապի* (80% նվազում), *էներգետիկայի* (34.8% նվազում) և *առևտրի* (39.4% նվազում) ճյուղերում: Միևնույն ժամանակ, շինարարության ծավալների աճ է արձանագրվել *բնակարանային շինարարության* (2.6% աճ), *գյուղատնտեսության* (120% աճ) և *հանքագործության* (50% աճ) ճյուղերում, ինչպես նաև *կոմունալ* (450% աճ) և *պետական կառավարման* (78.4% աճ) ծառայությունների ոլորտներում:

**Գյուղատնտեսության** ավելացված արժեքը տարվա առաջին եռամսյակում նվազել է 5%-ով՝ իրական նվազում՝ պայմանավորված ինչպես բուսաբուծության, այնպես էլ անասնապահության թողարկման ծավալների նվազմամբ: Ընդ որում, *անասնապահությունում* մսի և կաթի արտադրության շուրջ 10% նվազումը պայմանավորվել էր հունվար-փետրվարին Սյունիքում և Շիրակում արձանագրված բրուցելյոզի հետևանքով անասնազվաքանակի շուրջ 9% նվազմամբ: *Բուսաբուծության ենթաճյուղում* թողարկման ծավալների 14.4% նվազման հիմնական պատճառը տարվա առաջին եռամսյակում անբարենպաստ բնակլիմայական պայմանների հետևանքով գարնանացանի աշխատանքների հետաձգումն էր:

**Ծառայությունների** ոլորտում եռամսյակի ընթացքում արձանագրվել է ավելացված արժեքի աճի տեմպի նվազում մինչև 2.1%, որի հիմնական պատճառը *առևտրի* ծավալների աճի տեմպի կտրուկ անկումն է (առաջին եռամսյակում՝ 1.9%)՝ պայմանավորված *ավտոմեքենաների առևտրի* 46%-ով կրճատմամբ) և *մանրածախ ապրանքաշրջանառության* աճի տեմպերի դանդաղումը (հիմնականում ոչ խանութների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի ծավալների նվազման հետևանքով):

Միևնույն ժամանակ, մատուցված ծառայությունների ծավալը նվազել է 0.7%-ով՝ ի հաշիվ տրանսպորտի և կապի ոլորտում աճի դանդաղման պարագայում ֆինանսական գործունեության և հետազոտական ծառայությունների ծավալների համապատասխանաբար 21.9% և 32.1% նվազման:

**3.5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՆՑՈՒՄ**<sup>38</sup>

2009 թվականի առաջին եռամսյակի ընթացքում համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցությունն արտացոլվել է նաև աշխատանքի շուկայում. մասնավոր հատվածում արձանագրվել է գործազրկության մակարդակի զգալի աճ, իրական աշխատավարձի որոշակի նվազում: Այս պայմաններում աշխատանքի շուկայում մասնավոր հատվածի կողմից որոշակի գնանկումային ճնշումներ են առաջացել, որոնք չեզոքացել են պետական հատվածում արձանագրված աշխատավարձերի զգալի աճի հաշվին:

Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների՝ 2009 թվականի առաջին եռամսյակում տնտեսության անվանական աշխատավարձերի միջին աճը կազմել է տ/տ շուրջ 10%՝ պայմանավորված պետական հատվածում աշխատավարձերի աճով: Աշխատավարձերի զգալի աճ է արձանագրվել հիմնականում կրթության, առողջապահության և սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտներում, իսկ էական նվազում՝ հյուրանոցառեստորանային ոլորտում և հանքագործական արդյունաբերությունում:

Գործազրկության եռամսյակային միջին մակարդակը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 0.3 տոկոսային կետով և կազմել 6.6%: Ընդ որում, պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակն աճել է շուրջ 4%-ով, իսկ տնտեսությունում զբաղվածների թիվը նվազել է 1.3%-ով:

Եռամսյակի ընթացքում, տնտեսական ակտիվության նվազմամբ պայմանավորված, արձանագրվել է աշխատանքի արտադրողականության տ/տ նվազում շուրջ 5%-ով:

Ըստ գնահատումների, 2009 թվականի առաջին եռամսյակի ընթացքում աշխատանքի շուկայի կողմից գնաճային ճնշումներ չեն նկատվել, քանի որ մասնավոր հատվածում արձանագրված միավոր աշխատուժի ծախսերի որոշակի նվազումը չեզոքացրել է պետական հատվածում միավոր աշխատուժի ծախսերի աճի հետևանքով առաջացած գնաճային ճնշումները:

**3.6. ՆԵՐՄՈՒԾԱՆ ԳՆԵՐ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՂՆԵՐԻ ԳՆԵՐ**

**3.6.1. Ներմուծման գներ**

2009 թվականի առաջին եռամսյակում ներմուծման դոլարային գները պահպանվել են ցածր մակարդակի վրա՝ հիմնականում պայմանավորված համաշխարհային տնտեսական ճգնաժամով և համաշխարհային պահանջարկի շարունակական նվազմամբ: Ե՛վ հունքային, և՛ պարենային ապրանքների գները կայունացել են որոշակի գնային միջակայքում:

Ցուցանիշներ	I եռ. 08	II եռ. 08	III եռ. 08	IV եռ. 08	I եռ. 09
Ներմուծում (ընդհանուր)	29.5	30.6	25.5	5.6	-10.0
Ներմուծում (ծառայություններ)	25.6	29.5	25.7	6.4	-7.6
Ներմուծում (ապրանքներ)	30.8	31.0	25.4	5.2	-10.8
Կապիտալ ապրանքներ <sup>39</sup>	0.0	0.0	0.0	0.0	0.0
Սպառողական ապրանքներ	25.6	29.5	25.7	6.4	-7.6
Հումքային ապրանքներ	55.2	49.3	39.8	18.2	-11.1
Աղանձ <sup>39</sup>	0.0	0.0	0.0	0.0	0.0
Նավթամթերք	66.5	78.2	54.0	-37.2	-53.5
Բնական գազ	0.0	0.0	0.0	0.0	0.0

<sup>38</sup> Աշխատանքի շուկայի ցուցանիշները ՀՀ ԿԲ գնահատումներն են՝ հիմնված հունվար-փետրվարի փաստացի և մարտի գնահատած ցուցանիշների վրա:

<sup>39</sup> Կապիտալ ապրանքների և աղանձի գների գնահատականների բացակայությունը պայմանավորված է դրանց փաստացի խիստ մեծ տատանողականությամբ, այդ իսկ պատճառով գների փոփոխությունը գնահատվում է զրոյական:


Ըստ Կենտրոնական բանկի գնահատումների՝ 2009 թվականի առաջին եռամսյակում ներմուծման դոլարային գների տ/տ նվազել են 10 տոկոսով (նախորդ եռամսյակում գրանցվել էր տ/տ 5.6 տոկոս աճ):

Դոլարային գների փոփոխությունը հիմնականում պայմանավորվել է հումքային ապրանքների և նավթամթերքի գների ցածր մակարդակի պահպանմամբ ողջ եռամսյակի ընթացքում:

Հումքային ապրանքների գները տ/տ նվազել են 11.1 տոկոսով (նախորդ եռամսյակում՝ տ/տ 18.2 տոկոս աճ)՝ պայմանավորված հացահատիկի գներով (տ/տ 43.6 տոկոս նվազում՝ նախորդ եռամսյակի 33 տոկոս նվազման փոխարեն): Ընդհանուր գների վրա հումքային ապրանքների գներն ունեցել են -3.0 տոկոս ազդեցություն:

Նավթամթերքի գները նվազել են տ/տ 53.5 տոկոսով (նախորդ եռամսյակում նվազել են 37.2 տոկոսով)՝ ընդհանուր ներմուծման գների վրա ազդելով -3.4 տոկոսային կետով: Չնավորված միջին գինը 1 բարել Brent տեսակի նավթի դիմաց առաջին եռամսյակի ընթացքում տատանվել է մեկ բարելի դիմաց 40-50 ԱՄՆ դոլարի միջակայքում: Գների ցածր մակարդակի պահպանմանը նպաստող հիմնական գործոններն են համաշխարհային պահանջարկի թուլացումը և հետագա սպասումների անորոշությունը, ինչպես նաև ԱՄՆ դոլարի ուժեղացումը, որն էապես ազդում է հումքային ապրանքների դոլարային գների վրա:

*Ներմուծված ապրանքների գների ցածր մակարդակը առաջին եռամսյակում պահպանվել է*



Սպառողական ապրանքների գների նվազումը 2009 թ. առաջին եռամսյակում կազմել է տ/տ 7.6 տոկոս, որը ընդհանուր ներմուծման գների վրա ունեցել է -1.5 տոկոսային կետ ազդեցություն: Ընդհանուր առմամբ, գործընկեր երկրների փոխարժեքների արժեզրկման ազդեցությունը (18.6 տոկոսային կետ) առաջին եռամսյակում ավելի զգալի էր, քան գնաճինը (12.2 տոկոսային կետ): Եվրոպական արժույթների արժեզրկման հետևանքով Եվրոգոտու ազդեցությունը ընդհանուր ներմուծման գների վրա կազմել է -0.6 տոկոսային կետ, Չինաստանինը՝ 1.5, Ռուսաստանինը՝ -0.9:

Միջազգային գների ցածր մակարդակի և ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար անվանական փոխարժեքի արժեզրկման պայմաններում (առաջին եռամսյակում՝ տ/տ 5.7 տոկոս), սպառողական զանբյուղում ներառված ներմուծված ապրանքների դրամային գները տ/տ աճել են են 0.5 տոկոսով:

### 3.6.2. Արտադրողների գներ <sup>40</sup>

2009 թվականի առաջին եռամսյակում ՀՆԱ դեֆլյատորը կազմել է 101.9%՝ զիջելով նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը 3.7 տոկոսային կետով: Ընդ որում, տնտեսության ճյուղերում արտադրողների գների փոփոխությունը տարաբնույթ էր. շինարարության և բեռնափոխադրումների գների աճի պարագայում արդյունաբերության և գյուղատնտեսության գները նվազել են:

<sup>40</sup> Ներկայացվել են գների ինդեքսները և դրանց եռ./եռ. փոփոխությունը, եթե այլ բան նշված չէ: Տնտեսության ճյուղերի գների ինդեքսները թողարկման գների ինդեքսներն են:


**Գյուղատնտեսության** ճյուղում տարվա առաջին եռամսյակում գները նվազել են 11.8%-ով՝ պայմանավորված 2008 թվականին *կարտոֆիլի* և *ցորենի* հարուստ բերքի ստացման պարագայում դրանց գների համապատասխանաբար 50% և 28% նվազմամբ: *Անասնապահությունում* արձանագրվել է գների մի փոքր նվազում, թեև արտադրության ծավալները նույն ժամանակահատվածում կրճատվել են:

Գների առավել բարձր աճ է արձանագրվել **շինարարությունում**, որտեղ առաջին եռամսյակում գների ինդեքսը կազմել է 135.6%: Վերջինս պայմանավորվել է նվազման ուղղությամբ *շինանյութերի* գների ոչ ճկուն բնույթով, ինչպես նաև նախորդ տարվա առաջին եռամսյակում դրանց համեմատաբար ցածր մակարդակով (նախորդ տարի շինանյութերի գների կտրուկ աճը սկսվել էր ապրիլին):

**Արդյունաբերության** ճյուղում արտադրողների գները նվազել են 7.4%-ով, ինչը պայմանավորվել է համաշխարհային շուկայում գումավոր մետաղների գների կտրուկ անկման արդյունքում *մետաղագործությունում* արտադրողների գների նվազմամբ (հաշվետու եռամսյակում պղնձի միջազգային գները նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ նվազել են մոտ 55%-ով): Միևնույն ժամանակ, *էներգետիկայի* ենթաճյուղում արտադրողների գները փոքր-ինչ բարձրացել են պայմանավորված տարվա սկզբից էլեկտրաէներգիայի մեծածախ գների աճով:

**Բեռնափոխադրումների** սակագները տարվա առաջին եռամսյակում բարձրացել են 6.3%-ով՝ պայմանավորված հունվարից *երկաթգծով* բեռնափոխադրումների սակագների 28% (հունվարից երկաթգծի հավատարմագրային կառավարիչը սահմանել է նոր սակագներ), ինչպես նաև *օդային տրանսպորտով* բեռնափոխադրումների սակագների 4.8% թանկացմամբ:

*2009 թ. առաջին եռամսյակում գների ամենաբարձր ինդեքսը գրանցվել է շինարարությունում, իսկ ամենացածրը՝ գյուղատնտեսությունում*



### 3.7. ԳՆԱԾԻ ՄՊԱՍՈՒՄՆԵՐ

2009 թ. առաջին եռամսյակում ԶՂ ԿԲ-ն շարունակել է իրականացնել գնաճի սպասումների վերաբերյալ հարցումներ ֆինանսական հատվածի կազմակերպությունների, տնային տնտեսությունների և իրական հատվածի ոչ ֆինանսական կազմակերպությունների շրջանում:

Բանկերում և վարկային կազմակերպություններում 2009 թ. առաջին եռամսյակում իրականացված հարցումների համաձայն՝ ֆինանսական համակարգում գերակշռել են բարձր գնաճային սպասումները, քանի որ բանկերի մի մեծ խումբ նախապատվությունը տվել են 12-ամսյա գնաճի 5.5-8.5% միջակայքին, իսկ հաջորդ մեծ խումբը ակնկալում է 8.5%-ից բարձր գնաճ: Ֆինանսական համակարգի կանխատեսումները բարձր են թե՛ 12-ամսյա հորիզոնում գնաճի նպատակային թիրախից, թե՛ ԿԲ կողմից կանխատեսված ցուցանիշից, որը կարող է պայմանավորված լինել տարվա երկրորդ կեսից մակրոտնտեսական զարգացումների վերաբերյալ անորոշության էական մեծացմամբ:

Տնային տնտեսությունների ու իրական հատվածի ոչ ֆինանսական կազմակերպությունների՝ ապագա գների վերաբերյալ սպասումները փոքր-ինչ աճի ուղղությամբ են: Նախորդ եռամսյակի 34.4%-ի փոխարեն գների աճ է ակնկալում 36.7%-ը, իսկ կայուն մակարդակ՝ 51.6%-ը՝ նախորդ եռամսյակի 60.2%-ի փոխարեն:

Ըստ հարցման արդյունքների՝ շուկայական տոկոսադրույքների վերաբերյալ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների՝ մեկ տարվա հորիզոնով սպասումները բաշխվել են աճի ուղղությամբ և անփոփոխ մակարդակի պահպանման միջև: Ընդ որում, ֆինանսական համակարգը ակնկալում է ներգրավված և տեղաբաշխված դրամային միջոցների տոկոսադրույքների աճ, իսկ արտարժութային միջոցների տոկոսադրույքներին առնչվող սպասումները հիմնականում կայուն են:

